

**Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում
Հարավային Կովկասում**

**ՀՀ Սյունիքի մարզի
Սիսիանի տարածաշրջանի
էկոլոգիայի ուսումնասիրություն**



**«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն
Հաշվետվություն**

Ամփոփագիր

Հաշվետվության նպատակը

Սույն հաշվետվությունը մշակվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից (այսուհետ՝ **Խորհրդատու**) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության համար (այսուհետ՝ **GIZ**)՝ «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր) Սյունիքի մարզի Միսիանի տարածաշրջանում տիրող իրավիճակին նախնական գնահատական տալու նպատակով: Ծրագրի շրջանակում հատկապես կարևորվում են Միսիանի տարածաշրջանի 9 համայնքները՝ Նորավան, Շաքի, Թուրքու, Բոնակոթ, Աշոտավան, Թասիկ, Նժդեհ, Սալվարդ և Գորայքի ընդլայնված համայնքը՝ Գորայքի, Ծղուկի, Սառնակունքի և Մպանդարյան բնակավայրերով (բնակ.) (այսուհետ՝ պիլոտային համայնքներ):

Գնահատումը հիմնված է հետևյալ հիմնական ոլորտների ուսումնասիրության վրա՝

- ✓ Շրջակա միջավայր,
- ✓ Սոցիալ-տնտեսական իրավիճակ,
- ✓ Հողօգտագործում,
- ✓ Բնական ռեսուրսներ և դրանց կառավարումը (գործնականը և իրավական դաշտը),
- ✓ Հիմնական ծրագրերը և իրականացված միջոցառումները:

2011 – 2016 թթ.-ներն ի սկզբանե սահմանվել են որպես տվյալների հավաքագրման առավել արդյունավետ ժամանակահատված:

Ստորև ներկայացված հաշվետվությունում կարող եք տեսնել Սյունիքի մարզի սոցիալական ոլորտի, տնտեսության և բնական ռեսուրսների, ինչպես նաև այլ հարակից ոլորտների նշանակալի ցուցանիշների դինամիկան՝ հատուկ ուշադրություն դարձնելով Միսիանի տարածաշրջանին և պիլոտային համայնքներին:

Սույն հաշվետվության նպատակն է պատասխանել մի շարք հիմնական հարցերի, ինչպիսիք են՝

- ✓ Ո՞ր ոլորտներն ունեն բարելավման կարիք:
- ✓ Ինչպիսի՞ հիմնախնդիրների շուրջ պետք է կենտրոնանալ և ինչպիսի հիմնախնդիրներ պետք է լուծել ծրագրի ընթացքում:
- ✓ Ո՞ր հիմնական սովորությունները պետք է արմատախիլ անել պիլոտային համայնքների հետագա զարգացման համար:
- ✓ Ի՞նչ ենթակառուցվածքներ են բացակայում պիլոտային համայնքներում կտրուկ փոփոխություններ կատարելու համար:

Հիմնական արդյունքները և եզրակացությունները

Սյունիքի մարզում տիրող ընդհանուր իրավիճակի մասին համառոտ պատկերացում կազմելու համար, հարկ է նշել, որ այս տարածքը համարվում է մարդկային և բնական ռեսուրսների բավականին լավ ռեզերվ՝ զարգացած ձեռնարկությունների և կայուն ապրուստի միջոցների լայն ներուժով:

Օգտակար հանածոների և լեռնահանքային արդյունաբերության առկայությունը մասամբ նպաստում են զբաղվածության խնդիրների լուծմանը, չնայած էկոլոգիան կանգնած է բարձր ռիսկերի առջև՝ պայմանավորված տնտեսության այս ճյուղի զարգացմամբ:

Կենսամակարդակի առումով պետք է փաստել, որ միջին անվանական աշխատավարձերը նույնիսկ գերազանցում են մեր երկրում տարեկան կտրվածքով հաշվարկված Հանրապետական Միջին ցուցանիշը:

Ինչ վերաբերում է սեռին, միանգամայն գնահատելի է նշել, որ այստեղ իրավիճակը համեմատաբար հավասարակշռված է, և կանանց ներգրավվածությունը գյուղատնտեսությունում, ինչպես նաև՝ ընդհանուր սոցիալ-տնտեսական կյանքին, պետական և մասնավոր ձեռնարկություններում առկա աշխատանքի առումով, բավականին խոստումնալից է (ապահովում է ողջ տարածաշրջանում և պիլոտային համայնքներում 30 - 50%):

Չպետք է մոռանալ, որ կենտրոնացած լինելով մի շարք պետական, ազգային ու միջազգային նախագծերի շուրջ, շոշափելի դրական տեղաշարժեր են նկատվում բնական ռեսուրսների կառավարման ոլորտներում, օրինակ մոնիտորինգի պատշաճ մոդելի ստեղծմամբ արոտավայրերի կառավարումը 24 համայնքներում և հաջողված առնվազն 7 պիլոտային համայնքներում: Սա նաև կարող է խրախուսել այլ շրջաններին և մարզերին օրինակ վերցնել և իրականացնել համապատասխան ներդրումներ արոտավայրերի կառավարման համար՝ օգտագործելով Սյունիքի մարզի լավագույն պրակտիկան իրենց համակարգում գյուղատնտեսության, էկոլոգիայի և հետևաբար ամբողջ տնտեսության ընդհանուր զարգացման համար:

Այնուամենայնիվ, դեռևս կան բացթողումներ, որոնք խոչընդոտում են մարզի բնականոն զարգացմանը, որը պահանջում է ավելի ճշգրիտ ու հետևողական լուծումներ և կառուցողական միջամտություններ:

Բնական ռեսուրսների կառավարման տեսանկյունից, անտառային ռեսուրսների պահպանումը նույնպես պետք է ունենա հսկայական նշանակություն մարզի համար: Հաշվի առնելով այն փաստը, որ Սիսիանի Անտառագիտության վերջին թարմացումներն իրականացվել են 1980-ականներին, ազգային և միջազգային կազմակերպությունների կողմից որոշակի միջոցներ պետք է ձեռնարկվեն այս իրավիճակի ավելի նորացված տեսլականը ստանալու և, համապատասխանաբար, ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղղությամբ:

Սոցիալ-տնտեսական իրավիճակի առումով, այս բացերը կարող են վերաբերել կաթի և մսի սպառման/մթերման կետերին, գներին, սննդի որակին՝ մրցակցային գյուղատնտեսական ապրանքների համար, ճանապարհների կառուցմանը՝ դեպի հեռավոր շուկաներ մուտքը դյուրացնելու համար:

Ինչ վերաբերում է մշակութային կյանքին, ապա համայնքների մեծ մասը նախակրթական և հանրակրթական ուսումնական հաստատությունների համար անհրաժեշտ ավելի լավ պայմանների կարիք ունեն, առկա է վերանորոգման կամ վերակառուցման անհրաժեշտություն, և, ինչն ավելի կարևոր է, անհրաժեշտ է մշակութային կենտրոնների և կրթական հաստատությունների որակի բարելավում:

Ինչ վերաբերում է երկրորդական տվյալների հավաքագրման աշխատանքներին, անշուշտ պետք է նշենք, որ էլեկտրոնային տվյալները, ինչպիսիք են՝ համացանցային կայքերը, հաշվետվությունները և ցանկացած այլ հրապարակումներ, առաջադեմ չեն և չեն պարունակում չափազանց հարուստ տեղեկություններ և կարող են համարվել պակաս օգտակար, քան միջազգային տվյալների համանման կատեգորիաները: Բացի այդ, առկա տվյալները պատշաճ կերպով ստանդարտացված չեն, և միննույն աղբյուրից բավականին դժվար է միաժամանակ ստանալ նույնատիպ տվյալներ երկու համայնքների, մարզերի կամ այլ վարչական միավորների համար: Սա վկայում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների անարդյունավետ գործունեության մասին՝ թափանցիկության և հստակության առումով (այս խնդիրը տարածված է գրեթե ամբողջ երկրում):

Նույնանման խնդիր է նկատվում կապված համայնքի ռեգիստրներում հիմնական տվյալների առկայության հետ, որոնք ենթադրվում է, որ պետք է լինեն համայնքի բնակչությանը և կյանքին վերաբերող ցանկացած տեղեկատվության ամենահավաստի աղբյուրները: Այստեղ առկա է արխիվային փաստաթղթերի պահպանման լուրջ խնդիր, բարձր տեխնոլոգիաների կիրառման բացակայություն (թեև բոլոր պիլոտային համայնքները համապատասխան ծրագրի շահառուներ են եղել) և նույնիսկ շատ կարևոր տվյալների ոչ գրագետ հաշվարկների միտում (օրինակ՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ տվյալների փոխանակումը):

Բովանդակություն

Ամփոփագիր.....	iii
Բովանդակություն	vi
Աղյուսակների ցանկ	viii
Գծապատկերների ցանկ.....	x
Նկարների ցանկ.....	xi
Հապավումների ցանկ	xii
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1 Մեթոդաբանություն և գործիքակազմ	1
1.2 Սյունիքի մարզի ընդհանուր նկարագիրը՝ ըստ բնապահպանական, սոցիալ-տնտեսական և այլ չափանիշների.....	3
1.3 Համառոտ պատմական ակնարկ.....	5
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ.....	6
2.1 Սյունիքի մարզի ֆիզիկական-աշխարհագրական նկարագիրն ու առանձնահատկությունները	6
2.2 Բնակլիմայական պայմանները և տատանումները՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ազդող գործոնները	7
2.3 Հիմնական բնական պաշարները տարածաշրջանում	8
2.4 Տարածաշրջանում բնական պաշարների պահպանմանը խոչընդոտող հիմնական գործոնները. ախտանիշներից մինչև պատճառների վերլուծություն	12
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ	14
3.1 Տարածաշրջանում տնտեսության զարգացած և զարգացող առանցքային ճյուղերը.....	14
3.2 Ժողովրդագրություն, կրթություն, զբաղվածություն, միգրացիա, կենսամակարդակի, եկամուտները և ծախսերը, կախվածությունը բնական ռեսուրսներից՝ գոյատևման և ապրուստի միջոցների համար, էներգետիկ աղբյուրներ և հարակից ոլորտներ (համակցված վիճակագրություն վերստուգված փաստացի տվյալների հիման վրա).....	21
4. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴԲԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ	33
4.1 Հողերի տեսակները և օգտագործման ուղղությունները: Ընդհանուր նկարագիր և քարտեզագրում	33
4.2 Բուսականությունը տարածաշրջանում՝ կախված դրանց տեսակներից և օգտագործման ազդեցություններից (ներառյալ լուսանկարները).....	36
4.3 Ոլորտում նշանակալի փոփոխությունները	38

4.4 Գոյություն ունեցող օրենքները և իրավական կարգավորումները. ուժեղ և թույլ կողմերը, լրացման ենթակա շոշափելի բացթողումներ.....	39
5. ՊԻԼՈՏԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԸ	41
5.1 Բնական պաշարների քարտեզագրում, ինչպես օրինակ՝ բնական անտառների, արոտավայրերի, ջրային պաշարների քարտեզագրում. ընդհանուր նկարագիրը և վտանգները.....	41
5.2 Վերոնշյալ ռեսուրսների հետ կապված փորձը և զարգացման միտումները. լավագույն փորձ, սովորություններ և բարելավման ապացուցված անհրաժեշտությունը	45
6. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2011 - 2016 ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԿԱՄ / ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՆՏՐՎԱԾ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐԸ.....	47
6.1 Օժանդակող կազմակերպությունների կողմից իրականացվող/ֆինանսավորվող ծրագրերի համառոտ նկարագիրը. նպատակային ոլորտները և ընթացիկ կարգավիճակը (ավարտված կամ ընթացիկ).....	47
6.2 Լավագույն և վատագույն փորձերը. հաջողված պատմություններ և քաղված դասեր.....	51
7. Եզրակացություններ	57
8. Օգտագործված գրականության ցանկ	58
9. Հավելվածներ.....	59

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Միսիանի տարածաշրջանի հիմնական տեղեկատուները	2
Աղյուսակ 2. Միսիանի տարածաշրջան, պիլոտային համայնքների աշխարհագրությունը	7
Աղյուսակ 3. Միսիանի տարածաշրջանի մեծ գետերը.....	9
Աղյուսակ 4. Միսիանի տարածաշրջանի ջրամբարները	9
Աղյուսակ 5. Միսիանի տարածաշրջան, յուրաքանչյուր պիլոտային համայնքում կենդանիների թվաքանակը, 2016թ.....	11
Աղյուսակ 6. Սյունիքի մարզի գյուղատնտեսության ծավալը և տեսակարար կշիռը ՀՀ-ում, մլրդ. դրամ և %	16
Աղյուսակ 7. Միսիանի տարածաշրջան, կենդանիների գլխաքանակն ըստ յուրաքանչյուր պիլոտային համայնքի, 2016	16
Աղյուսակ 8. Կենդանական ծագման արտադրանք, Սյունիքի մարզ, 2016	18
Աղյուսակ 9. Շինարարության տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն. դրամ և % ..	18
Աղյուսակ 10. Մանրածախ առևտրի տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն. դրամ և %	19
Աղյուսակ 11. Ծառայությունների տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն. դրամ և %	19
Աղյուսակ 12. Մանրածախ վաճառքի կետեր, քանակը Սյունիքի մարզում.....	19
Աղյուսակ 13. Արտահանման ծավալը և տեսակարար կշիռը ՀՀ-ում, մլն. դրամ և %.....	20
Աղյուսակ 14. Ներմուծման ծավալը և տեսակարար կշիռը ՀՀ-ում, մլն. դրամ և %	20
Աղյուսակ 15. Բնակչության թվաքանակը պիլոտային համայնքներում, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ.....	22
Աղյուսակ 16. Ժողովրդագրությունը պիլոտային համայնքներում, տարիքը և գենդերային խումբը, 2016	24
Աղյուսակ 17. Պետական հանրակրթական դպրոցների հաճախելիությունը Սյունիքի մարզում, 2015/2016 ուսումնական (ուս.) տարի.....	25
Աղյուսակ 18. Ուսանողների քանակը Սյունիքի մարզի բարձրագույն մասնագիտական հաստատություններում, 2015/2016 ուս. տարի	25
Աղյուսակ 19. Գործազրկության մակարդակը Սյունիքի մարզում ըստ սեռի, %, 2014 – 2015թթ.	27
Աղյուսակ 20. Համայնքներում միգրացիայի կարգավիճակն ըստ ծավալի, նպատակների, ուղղությունների և հնարավորությունների, 2016թ.....	29
Աղյուսակ 21. Սյունիքի մարզի աղքատության մակարդակը հանրապետական միջինի նկատմամբ, %, 2012 – 2015թթ.....	30
Աղյուսակ 22. Սյունիքի մարզում մեկ տնային տնտեսության հաշվով եկամտի աղբյուրները, դրամ, 2015թ	30
Աղյուսակ 23. Հողերի բաշխումը Միսիանում և պիլոտային համայնքներում ըստ օգտագործման և տեսակների, հա, 2015թ.....	34

Աղյուսակ 24. Հողօգտագործման տեսակներն ըստ գյուղատնտեսական արտադրանքի, Սյունիքի մարզ, 2015թ.	37
Աղյուսակ 25. Միջազգային և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ներդրումները Սյունիքի մարզում 2015թ.-ին, հազ. դրամ	47
Աղյուսակ 26. Մեծածավալ ծրագրերը՝ իրականացնող կազմակերպությունների կողմից, 2015թ.	50
Աղյուսակ 27. Պիլոտային համայնքներում Գյուղական զարգացման հաջողված և ձախողված ծրագրերը, ուղղակի հարցազրույցներ, 2011 – 2016 թթ.	51

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. ՀՀ-ում փայտանյութի հատման և շուկայահանման ծավալները, 2011 – 2016 թթ., հա	11
Գծապատկեր 2. Տնտեսության հիմնական ճյուղերը Սյունիքի մարզում, տեսակարար կշիռը ՀՀ-ում, 2015թ.	14
Գծապատկեր 3. Սյունիքի մարզի արդյունաբերության ճյուղերը, մլն. դրամ, %, 2015թ.	15
Գծապատկեր 4. Սյունիքի մարզի արդյունաբերության ծավալի դինամիկան, մլն. դրամ	15
Գծապատկեր 5. Արտադրական նշանակության կենդանիներ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ.....	17
Գծապատկեր 6. Սյունիքի մարզում ծառայությունների բաշխումն ըստ տեսակների 2016թ. դրությամբ, մլն. դրամ և %	20
Գծապատկեր 7. Բնակչության ընդհանուր թվաքանակը պիլոտային համայնքներում և Միսիան քաղաքում, մարդ	21
Գծապատկեր 8. Տնային տնտեսությունների քանակը պիլոտային համայնքներում, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	23
Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձը Սյունիքի մարզում, դրամ, 2013 – 2015 թթ	27
Գծապատկեր 10. Սյունիքի մարզ, մեկ շնչի հաշվով եկամուտների բաշխումն ըստ աղբյուրների, դրամ, 2015թ.	31
Գծապատկեր 11. Գյուղատնտեսական նշանակության հողերը Սյունիքի մարզում, հա, 2016 թ.	33
Գծապատկեր 12. Գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակարար կշիռը Միսիան քաղաքում և պիլոտային համայնքներում, հա, %, 2016 թ.-ի դրությամբ	35
Գծապատկեր 13. Անտառածածկ մակերևույթների և պահուստների բաշխումն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության, %	43
Գծապատկեր 14. Արտավայրերի բաշխումն ըստ Միսիանի տարածաշրջանի պիլոտային համայնքների, հա և %, 2016 թ.-ի դրությամբ	44
Գծապատկեր 15. Ներդրումների բաշխումը Սյունիքի մարզում, %, 2015թ.	49
Գծապատկեր 16. Ներդրումներն ըստ աղբյուրների և ուղղությունների, մլրդ. դրամ, Սյունիքի մարզ, 2014-2015 թթ.	50
Գծապատկեր 17. Արտավայրերի կառավարման բարելավումներից հետո ֆերմերային տնտեսության կողմից կիրառված մեթոդները, %, 2015թ.-ի վերջ	56

Նկարների ցանկ

Նկար 1 Հարցազրույց Շաքիում	2
Նկար 2 Սյունիքի մարզի քարտեզը	3
Նկար 3 Կլիման Սիսիանի տարածաշրջանում	8
Նկար 4 Տոլորսի ջրամբարը	10
Նկար 5 ՀՀ բազմապիսի բուսականության և բնակավայրերի բաշխումն ըստ տեսակների	36
Նկար 6 Սիսիանի տարածաշրջանի քարտեզ: Անտառտնտեսությունը ըստ պետական անտաների և ենթաճյուղերի	42
Նկար 7 Բոնակոթի արտոտավայրերի կառավարման քարտեզը.	45

Հապավումների ցանկ

սմ	սանտիմետր
ուս.	ուսումնական
հա	հեկտար
կմ	կիլոմետր
մ	մետր
մլն.	միլիոն
բնակ.	բնակավայր (եր)
հազ.	հազար
AGP	Թույլատրելի արածեցման ճնշում
ԳԾԻԳ	Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ
ՀԳՌԿՄ(CARMAC)	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր
ԱԳ	Անասնազլխաքանակ
ՄՊԸ	Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԱՎՑ	Արոտավայրերի վիճակի ցուցիչ
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ՌԶԳ ՀԿ	“Ռազմավարական զարգացման գործակալություն” հասարակական կազմակերպություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
SU	Տեխնիկական առաջադրանք
ՈԻՎԿ	Ունիվերսալ վարկային կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Մեթոդաբանություն և գործիքակազմ

Հետազոտության գործընթացն իրականացվել է երկու առանցքային փուլերով՝

Ա. Գրասենյակային ուսումնասիրություն և երկրորդական տվյալների համար փաստաթղթերի վերանայում,

Բ. Հարցազրույցներ հիմնական տեղեկատուների հետ՝ առաջնային մանրամասների հավաքագրման համար:

Գրասենյակային ուսումնասիրություն և փաստաթղթերի վերանայում: Գրասենյակային ուսումնասիրության և փաստաթղթերի վերանայման միջոցով Խորհրդատուն հավաքագրել է երկրորդական տեղեկատվություն տեխնիկական առաջադրանքում նշված թեմայի վերաբերյալ համապատասխան ոլորտներում գեներացված հիմնական ծրագրերում և հաշվետվություններում նշված թեմատիկ ոլորտների վերաբերյալ յուրաքանչյուր թիրախային մարզի / տարածաշրջանի համար, որոնք նշված են տեխնիկական առաջադրանքի մեջ: Տարածաշրջանային ռազմավարական փաստաթղթերի, քաղաքականության և իրավական փաստաթղթերի վերանայման հետ մեկտեղ, վերլուծվել են նաև վիճակագրական հաշվետվությունները՝ այդ մարզերում/համայնքներում ներկայումս տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը հասկանալու համար: Վիճակագրական և այլ վերլուծությունները հիմնված են հետևյալ կառույցների կողմից տրամադրված հաշվետվությունների և հրապարակումների վրա, որոնք են՝

- ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը,
- Նպատակային մարզերի/տարածաշրջանների մարզպետարանները,
- Այլ պետական և ոչ պետական կազմակերպություններ, նախարարություններ և միջազգային կազմակերպություններ:

Հարցազրույցներ հիմնական տեղեկատուների հետ: Խորհրդատուն անհատական հարցազրույցներ է վարել հիմնական տեղեկատուների և շահագրգիռ կողմերի հետ (թիրախավորված շրջանների/տարածաշրջանների և համայնքի համայնքապետարանի և համայնքապետարանների ղեկավարության հետ և այլն) անձնական հանդիպումների և հանգամանալից հարցազրույցների միջոցով: Մասնավորապես, առաջնային հետազոտության փուլի հարցազրույցների առանցքային մասնակիցները համայնքապետերը և/կամ համայնքապետարանների ներկայացուցիչներն են եղել: Հարցվողների ցանկը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 1. Միսիանի տարածաշրջանի հիմնական տեղեկատուները

	Համայնք	Անուն, Ազգանուն	Կարգավիճակ
1	Աշոտավան	Արմեն Բեգլարյան	Համայնքի ղեկավար
2	Բոնակոթ	Ատոմ Առաքելյան	Համայնքի ղեկավար
3	Գորայք	Առուստամ Առուստամյան	Համայնքի ղեկավար
4	Նժդեհ	Նելլի Թանգյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
5	Նորավան	Սլավիկ Պապյան	Համայնքի ղեկավար
6	Մավարդ	Վարդան Մեսրոբյան	Համայնքի ղեկավար
7	Մառնակունք (բնակ.)	Մանուշար Մկրտչյան	Վարչական ներկայացուցիչ ¹
8	Շաքի	Վահան Ղազարյան	Համայնքի ղեկավար
9	Սպանդարյան (բնակ.)	Վարուժան Վարդանյան	Աշխատակազմի քարտուղար
10	Թասիկ	Մելինե Աղայան	Աշխատակազմի քարտուղար
11	Տոլոբս	Մարատ Առաքելյան	Համայնքի ղեկավար
12	Ծղուկ (բնակ.)	Հակոբ Խաչատրյան	Աշխատակազմի քարտուղար

Բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով ընտրվեցին Սյունիքի մարզի բավականին գրագետ և խելացի դաշտային աշխատողներ, որոնց տրվեցին մանրամասն ցուցումներ ի սկզբանե մշակված ուղեցույցի² հիման վրա: Հարցազրույցների ընթացքում նրանք կատարել էին մանրամասն նշումներ, ինչպես նաև՝ տեղում իրականացրել էին որոշ ձայնային ձայնագրություններ՝ հետագայում կիսվելով հավաքագրված տեղեկատվությամբ՝ գրավոր և էլեկտրոնային տարբերակով: Նրանք գործում էին համաձայնեցված ողջ դաշտային աշխատանքների իրականացման ժամանակահատվածում՝ ինտենսիվ արձագանքներ ստանալով համակարգված կերպով նյութերի մատուցման համար:



Նկար 1 Հարցազրույց Շաքիում

Հավաքագրված և վերլուծված երկրորդական տվյալների վերստուգման, ինչպես նաև հանրային տեղեկատվական նյութերում բացակայող տեղեկատվության լրացման նպատակով, **ուսումնասիրվել են նաև 2011-2016 թթ.** արխիվային փաստաթղթերը՝ պիլոտային համայնքներ կատարած այցելությունների ընթացքում: Բնակչության և կենդանիների համայնքային գրանցամատյանները, հողերի տեսակների և արտավայրերի տնօրինման քարտեզները, ինչպես նաև այլ հարակից փաստաթղթեր և նյութեր սկանավորվել և ձեռք են բերվել համայնքապետարաններից:

¹ Փոխարինվել է հարցազրույցից 1 շաբաթ անց:

Ի վերջո, առաջնային և երկրորդական աղբյուրներից ստացված բոլոր տվյալները ճշգրտորեն համադրվել են, գնահատվել իրատեսության տեսանկյունից, վերլուծվել և ներկայացվել են սույն հաշվետվությունում տեքստերի, աղյուսակների, դիագրամների և գծապատկերների, նկարների և սմաթթ արթի միջոցով:

1.2 Սյունիքի մարզի ընդհանուր նկարագիրը՝ ըստ բնապահպանական, սոցիալ-տնտեսական և այլ չափանիշների

ՀՀ Սյունիքի մարզը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) 10 մարզերից մեկն է, որը գտնվում է երկրի հարավում: Այն զբաղեցնում է 4,506 կմ² տարածք, որը կազմում է ՀՀ ընդհանուր տարածքի 15.1 %-ը: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի բնակչությունը կազմում էր 139.4 հազար (հազ.) մարդ, որը ՀՀ ընդհանուր բնակչության 4.7 %-ն էր: Վերոնշյալ բնակչության 94 հազարը քաղաքայիններն են, մնացած 45,4 հազարը՝ գյուղաբնակները: Բնակչության խտությունը կազմում է 34 մարդ/քառ.կմ: Մարզի մայրաքաղաքը Կապանն է՝ Սյունիքի մարզի խոշորագույն քաղաքը և ՀՀ 4-րդ քաղաքն իր մեծությամբ:

Սյունիքի մարզում կա 66 քաղաքային և 6 գյուղական համայնք, իսկ բնակավայրերի ընդհանուր թիվը կազմում է 135, որից 105-ը սահմանամերձ են, լեռնային և բարձր լեռնային:

Սահմանի ընդհանուր երկարությունը 472 կիլոմետր (կմ) է: Մարզն ունի 42 կմ երկարությամբ ձգվող պետական սահման Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարավում և 110 կմ երկարությամբ ձգվող պետական սահման Ադրբեջանի Հանրապետության (Նախիջևանի ինքնավար մարզ) հետ արևմուտքում: Արևելքում սահմանակից է Արցախին և հյուսիսում՝ ՀՀ Վայոց ձորի մարզին:

Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3906 մետր (մ) բարձրությամբ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380մ): Հայտնի է նաև իր Բաղաց, Խուստուփ, Մեծ Իշխանասար և Արամազդ լեռնագագաթներով:

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը:

2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:



Նկար 2 Սյունիքի մարզի քարտեզը

2012թ. գործարկվեց իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը, որն իրար էր միացնում Հին Խնձորեսկի երկու ձորափը (Ղանդունց նովն ու Ներքին թաղը): Կամուրջը ձգվում է ավելի քան 160 մետր, հսկա ձորի մի ավիից մյուսը: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մ է: Կամրջի բանուկ զանգվածը կախված է ամուր ու ձիգ ճոպաններից (կախովի կամուրջ), այդ պատճառով էլ քայլելիս կամուրջը ճոճվում է, որի պատճառով ժողովուրդն այն անվանել է «ճոճվող կամուրջ»:

Միսիան քաղաքից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են «Զորաց քարեր» հուշարձանախումբը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտանի, Բդենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Միսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

«Զորաց քարեր» հուշարձանախումբը գտնվում է 3.2 կմ դեպի հյուսիս Միսիան քաղաքից: Այն հայտնի է նաև Քարահունջ անունով և հանդիսանում է մեգալիթյան դարաշրջանի (Ք.ա. II հազարամյակ) ծնունդ: «Զորաց քարեր»-ը հանդիսանում են աշխարհում հայտնի հնագույն մեգալիթիկ համալիրներից և աստղադիտարաններից մեկը, հնդեվրոպական քաղաքակրթության քարեդարան-վկայարան, որի գաղտնիքները դեռևս բացահայտված չեն գիտության կողմից: Զորաց քարերը հաճախ անվանում են «հայկական Սթոունհենջ»՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողների կարծիքով այստեղ ևս առկա է մեգալիթիկ աստղադիտարան:

Սյունիքի հովիտները և հարուստ արոտավայրերը հատկապես հարմար են անասնաբուծության, իսկ գետերի հովիտները նպատակահարմար են գյուղատնտեսության համար:

Տնտեսության վերաբերյալ լրացուցիչ մանրամասները Սյունիքի մարզին առնչվող ոլորտների, մասնավորապես պիլոտային համայնքների մասով նկարագրված են ստորև:

1.3 Համառոտ պատմական ակնարկ

Սյունիքի մարզը հայտնի է իր երկու անվանումներով՝ Սյունիք և Միսական: Համաձայն Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի կամ այլ կերպ՝ «Աշխարհագրական»-ի՝ Սյունիքը Մեծ Հայքի 9-րդ նահանգն էր՝ ձգվելով Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան մասով և սահմանակից էր Այրարատ, Վասպուրական, Արցախ, Գուգարք և Ուտիք նահանգներին:

Սյունիքի նահանգը զբաղեցնում է ավելի քան 15,000 կմ² և ունի 1008 գյուղեր, 43 բերդաքաղաքներ, 48 վանական համալիրներ: Բարձրավանդակը կապված է արտաքին աշխարհի հետ լեռնանցքներով և անանցանելի ճանապարհներով:

Պատմական աղբյուրներում Սյունիքը հաճախ վկայակոչվում է որպես ազդեցիկ իշխանություն: 987 թ.-ին Սմբատ կառավարիչն առաջին անգամ հռչակեց Սյունիքը որպես թագավորություն: Սյունիքի թագավորությունը հայտնի էր նաև որպես Բաղաց կամ Կապանի թագավորություն: Թագավորության մայրաքաղաքը սկզբնական շրջանում Շաղատն էր, իսկ X դարի վերջում Կապանը փոխարինեց նրան որպես մայրաքաղաք:

Միսիան քաղաքը (2016թ. տարեսկզբին ընդգրկել է 14 856 հազ. մարդ), գտնվում է Երևանից 206 կմ, իսկ մարզկենտրոնից՝ 110 կմ հեռավորության վրա, տնտեսությունը հիմնականում մասնագիտացված է հանքարդյունաբերության ոլորտում, մասնավորապես՝ ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրության և մշակող արդյունաբերության, այդ թվում՝ սննդի և խմիչքների, տեքստիլ և կարի արտադրանքի արտադրություններ:

Միջնադարում Միսիանն անվանել են Սյունի, իսկ 1930-ականներին այն հայտնի էր որպես Միսիական: Ներկայումս Միսիանի տարածաշրջանն հիմնականում զբաղեցնում է պատմական Սյունիքի Ծղուկ նահանգի տարածքը: Ծղուկ նահանգի անվանումը հիշատակվում է դեռևս մ. թ. VIII դարի գրավոր աղբյուրներում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԸ

2.1 Սյունիքի մարզի ֆիզիկական-աշխարհագրական նկարագիրն ու առանձնահատկությունները

ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան և Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի արևելյան լանջերը, որը Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթան է:

ՀՀ Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Սյունիքը լեռնային մարզ է՝ հիմնականում ծածկված խիտ կանաչ անտառներով: Զանգեզուրի լեռները զբաղեցնում են Սյունիքի տարածքի զգալի մասը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Սյունիքի մարզն ունի հազվագյուտ բնություն, թավուտ անտառներ, նեղ կիրճեր, հարուստ կենդանական աշխարհ, պատմական և մշակութային հուշարձաններ: Սյունիքի մարզի անտառներից շատերը գտնվում են Կառավարության հսկողության ներքո:

Այստեղ է գտնվում աշխարհի ամենամեծ բնական սուսիների ռելիկտային պուրակը՝ Ծավ գետի ավազանում, Կապան քաղաքից հարավ-արևելք, որը զբաղեցնում է զբոս 120 հա տարածք, իր մակերեսով 2-րդն է աշխարհում: Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տարիքն անցնում է մի քանի հարյուր տարին, տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 30-35 մ-ի: Այն սահմանակից է «Շիկահող» պետական արգելոցի Մթնածորի տեղամասին, որը հայտնի է իր կուսական, անխաթար բնությամբ, լանդշաֆտներով և կենդանական աշխարհով: Արգելոցի Շիկահողի տեղամասը գտնվում է քաղաքից 25 կմ հեռավորության վրա:

Ներկայումս Միսիանի տարածաշրջանը հայտնի է իր գեղատեսիլ վայրերով և ապշեցուցիչ բնությամբ, որոնցից հատկապես պետք է նշել Շաքիի ջրվեժը, Որոտանի կիրճ, լեռնային լճերն ու ջրամբարները:

Ստորև բերված աղյուսակում կարող ենք տեսնել Միսիանի տարածաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր պիլոտային համայնքի և բնակավայրի հիմնական նկարագրությունը:

Աղյուսակ 2. Միսիանի տարածաշրջան, պիլոտային համայնքների աշխարհագրությունը

	Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ	Հեռավորությունը Միսիանից, կմ	Բարձրությունը ծովի մակարդակից, մ
Գորայք	127	30	2,140
Ծղուկ	123	25	2,220
Սառնակունք	120	22	2,170
Սպանդարյան	116	19	2,150
Բոնակոթ	111	7	1,700
Թասիկ	117	13	1,740
Շաքի	98	6	1,720
Տոլորս	112	8	1,720
Սավվարդ	123	19	1,940
Աշոտավան	112	8	1,750
Նորավան	99	12	1,700
Նժդեհ	128	24	2,000

Հարկ ենք համարում նշել, որ Գորայքի բազմաբնակավայրը ստեղծվել է 2016թ.-ի սեպտեմբերին Սյունիքի մարզի 4 համայնքների ընդլայնման արդյունքում՝ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի փոփոխության (17 հունիս 2016թ.) հիման վրա: Այն ընդգրկում է Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերը:

Որպես Միսիանի տարածաշրջանի կենտրոնական քաղաք՝ Միսիան քաղաքը գտնվում է Կապան մարզկենտրոնից 115 կմ, իսկ ՀՀ մայրաքաղաքից՝ 217 կմ հեռավորության վրա, իսկ բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1,600 մ:

Բոլոր պիլոտային համայնքներում գյուղատնտեսության կարևոր ուղղություններն են անասնաբուծությունը, այգեգործությունը և հողագործությունը:

2.2 Բնակլիմայական պայմանները և տատանումները՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ազդող գործոնները

Կլիման Միսիանի տարածաշրջանում ցուրտ և բարեխառն է, որը բնութագրվում է չափավոր և ցուրտ ձմեռներով և չոր ամառներով:

Բուսականության ժամկետը կազմում է 180 օր:

Ձմեռը Միսիանում երկարատև է: Ձյան ծածկույթի բարձրությունը կազմում է 20 – 50 սանտիմետր (սմ): Ձյան հաստատուն շերտը մնում է 3 – 4 ամիս: Օդի միջին ջերմաստիճանն հունվարին այստեղ 4,8 °C է, տարեկան միջինը՝ 6,9 °C, իսկ բացարձակ նվազագույնը՝ 34 °C:

Գարունը զով է և երկարատև: Այն սկսվում է ապրիլի երկրորդ կամ երրորդ տասնօրյակից և ավարտվում հունիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակում: Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին 17,9 °C, բացարձակ առավելագույնը հասնում է մինչև 36 °C:

Նկար 3 Կլիմայի Միսիանի տարածաշրջանում

Աշունը զով է: Աշնան առաջին ցրտահարությունները տեղի են ունենում հոկտեմբերի առաջին և երկրորդ տասնօրյակում: Ոչ ցրտաշունչ օրերի թիվը կազմում է տարեկան 120 – 180օր: Տեղումների քանակը տարածաշրջանում 532 մմ² է: Քիչ տեղումներն իրենց ազդեցությունն են թողնում տարածաշրջանում ծառերի աճի և ձևավորման վրա: Ամենաձանր տեղատարափը նկատվում է գարնանը, հատկապես մայիսին:

Միջին ջերմաստիճանը	2 °C (35,6 °F)
Նվազագույն ջերմաստիճանը	-18 °C (-0,4 °F)
Առավելագույն ջերմաստիճանը	20 °C (68 °F)
Ցերեկային միջին ջերմաստիճանը	6 °C (42,8 °F)
Գիշերային միջին ջերմաստիճանը	2 °C (35,6 °F)
Ցերեկային նվազագույն ջերմաստիճանը	-11 °C (12,2 °F)
Գիշերային նվազագույն ջերմաստիճանը	-18 °C (-0,4 °F)
Ցերեկային առավելագույն ջերմաստիճանը	20 °C (68 °F)
Գիշերային առավելագույն ջերմաստիճանը	16 °C (60,8 °F)
Քամու միջին արագություն	10 կմ/ժ
Քամու առավելագույն արագություն	29 կմ/ժ
Օդի միջին խոնավությունը	72%
Մթնոլորտային միջին ճնշումը	1001 կՊա
Տարվա ամենաերկար օրը	12' 23"
Տարվա ամենակարճ օրը	9' 23"

2.3 Հիմնական բնական պաշարները տարածաշրջանում

Մյունիքի մարզն իր օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է:

Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլն) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, և ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

Ինչ վերաբերում է մարզի և տարածաշրջանի հողային ռեսուրսներին, ապա նրանց տեսակներն ուղղակիորեն կախված են այն տարածքների բարձրություններից, որտեղ նրանք գտնվում են: Մուգ շագանակագույն հողերը զբաղեցնում են այն տարածքները, որոնք գտնվում են ծովի մակերևույթից մինչև 1600 մ բարձրության վրա: Այս տիպի հողերին բնորոշ է թույլ թթվային/հիմնային ռեակցիան: Դրանք դասվում են թույլ կմախքային հողերի շարքին, որոնք բնորոշ են Որոտանի ավազանին՝ իր չափազանց մասնատված ռելիեֆով, մինչդեռ նրա մեխանիկական կառուցվածքը բաղկացած է կավից և ավազից (51%):

² Միսիանի տարածաշրջանի կլիմայի բնութագրիչները զգալիորեն տարբերվում են ըստ առաջացման աղբյուրների, օրինակ տեղումների քանակը որոշ աղբյուրներում փոխվում է 25 -60 մմ սահմաններում և որոշ այլ աղբյուրներում՝ 400 - 560 մմ:

1600-2000 մ ծովի մակերևույթի բարձրության սահմաններում գերիշխում են բաց շագանակագույն հողերը, որոնք հիմնականում տարբերվում են նախորդից վերին շերտերում

Աղյուսակ 3. Միսիանի տարածաշրջանի մեծ գետերը

	Երկարությունը ՀՀ-ում, կմ	Միջին թեքությունը, %	Ջրահավաք ավազանը, կմ ²	Միջին տարեկան հոսքի չափը, մ ³ /վ	Տարեկան միջին հոսքը, մլրդ. մ ³
Որոտան	111	21	2,000	19.7	0.62
Ողջի	43	68	788	11	0.35

հումուսի պարունակությամբ:

2,000-2,200 մ ծովի մակերևույթի բարձրության սահմաններում հայտնի են լեռնային սևահողերը, որոնք առանձնանում են իրենց ծագումնաբանական հորիզոնների հստակ զատորոշմամբ, հզոր պրոֆիլով, վերին շերտերում հումուսի հարուստ պարունակությամբ (4 – 11 %):

Ինչ վերաբերում է ջրային ռեսուրսներին, ապա Սյունիքի մարզը հարուստ է գետերով՝ իրենց բազմաթիվ վտակներով, որոնցից կարելի է առանձնացնել Ողջի, Որոտան, Վաչագան և Մեղրիգետ գետերը:

Ողջի և Վաչագան գետերը հոսում են Կապան քաղաքի միջով: Բացի իրեն շրջապատող լեռներից քաղաքն ունի նաև հազարավոր աղբյուրներ և փոքր գետեր/վտակներ, որոնք առաջացել են Խուստուփ լեռան ձևակալման հետևանքով:

Մյուս վտակները միասին միանում են Վաչագան գետի մեջ: Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից, սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Միսիանի տարածաշրջանն ընդգրկում է, մասնավորապես, Որոտան և Ողջի գետերը (տես՝ Աղյուսակ 3):

Միսիանի տարածաշրջանը հարուստ է նաև հանքային ջրերով (Միսիան-անտառտնկարան, Միսիան-օդանավակայան, Անգեղակոթ, Ուռուտ, Աղիտու, Լեռնաշեն, Ույծ, Լոր, Շաղաթ և այլն): Այս ջրերը հիմնականում պարունակում են երկաթ, ֆտոր, բրոմ, մանգան և պղինձ: Դրանք ըմպելի բուժական ջրեր են՝ նման Բջնիի և Հանքավանի հանքային ջրերին: Իրենց բաղադրությամբ համարվում են «Ջերմուկ»-ի և Կիսլովոդսկի «Նարզանի» մոտ նմանակները, տարբերվում են միայն ջերմաստիճանով:

Աղյուսակ 4. Միսիանի տարածաշրջանի ջրամբարները

	Ծավալը, մլն. մ ³	Հայելային մակերեսը, հա
<i>Սպանդարյան</i>	257.0	1,025
<i>Շամբ</i>	13.6	112.0
<i>Տոլորս</i>	96.0	480.0
<i>Անգեղակոթ</i>	3.4	54
<i>Բռնակոթ</i>	0.54	Ոչ պիտանի ³

³ Ստույգ տվյալները բացակայում են պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրներում:

Ինչ վերաբերում է ջրամբարներին, ապա դրանցից 9-ը գտնվում են Սյունիքի մարզում: Միսիանի տարածաշրջանը հիմնականում ընդգրկում է Մպանդարյանի, Շամբի, Տոլորսի, Անգեղակոթի և Բռնակոթի ջրամբարները, որոնց մանրամասն նկարագրությունը բերված է Աղյուսակ 4-ում: Դրանք հիմնականում ունեն էներգետիկ մատակարարման նշանակություն, բացառությամբ վերջինս, որը հիմնականում օգտագործվում է ոռոգման նպատակով: Ի թիվս Սյունիքի մարզի այլ ջրամբարների պետք է նշենք Գեղի, ԴավիթԲեկի, Քարահունջի և Զիլ ջրամբարներն՝ համապատասխանաբար 15 մլն, 3,2 մլն, 1.27 մլն և 0,5 մլն մ³ ծավալներով, որոնք ամբողջությամբ շահագործվում են ոռոգման նպատակով:



Նկար 4 Տոլորսի ջրամբարը

Մպանդարյան և Տոլորս ջրամբարները գտնվում են Միսիանի տարածաշրջանում, ավելին՝ Տոլորս ջրամբարը գտնվում է Տոլորս պիլոտային համայնքում: Այն Ռրոտանի հիդրոէլեկտրակայանի կասկադի հիմնական կարգավորվող ջրամբարներից է:

Տեսարանի գեղագիտական գեղեցկության առումով հաճելի է դիտել ջրամբարը գարնանը, ամռանը և աշնանը: Այստեղ է գտնվում 19-րդ դարում կառուցված սուրբ Հռիփսիմե եկեղեցին, որը տասնամյակների ընթացքում անցավ ջրի տակ՝ ջրի մակարդակի բարձրացման հետևանքով: Այսպես, ամռան վերջին կամ աշնան սկզբին, երբ ջրի մակարդակը նվազում է, բազիլիկ եկեղեցին հայտնվում իր ողջ գեղեցկությամբ ու գմբեթին

տեղադրված քրիստոնեական խաչով:

Ըստ մի քանի մարզային, տեղական և պետական լրատվական աղբյուրների՝ 2016 թ. ամռանը տարածաշրջանում մեկնարկելու է շինարարական աշխատանքների հեռանկարային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել 26 ջրամբար Ռրոտան, Մեղրիգետ և Ողջի գետերի ավազաններում: Երեք ջրամբար արդեն իսկ նախագծվել է՝ Մուխուտուրյան, Լիճք և Գյոլջի, մյուս երկուսը՝ Ծավն ու Նորաշենիակը, գտնվում են նախագծման փուլում: Հարավային Ջրավազանային կառավարման պլանի համաձայն՝ ջրամբարի շինարարության հեռանկարային ծրագրի իրականացման արդյունքում լրացուցիչ հզորություններ կստեղծվեն Սյունիքի մարզի գետերի ավազանների համար՝ մոտ 219,4 մլն մ³ ջրի հավաքման համար:


Ըստ Հայանտառ պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից ստացված տվյալների՝ Սյունիքի մարզն ունի մոտ 60.203 հա անտառային հողեր, որոնցից փաստացի 49,990.5 հա անտառածածկ են: Անտառի այս տարածքները պաշտոնապես ընդգրկված են Կապանի (38,253 հա, որից 35,082 հա՝ անտառածածկ), Սյունիքի (16,530 հա, որից 12,845.1 հա՝ անտառածածկ) և Միսիանի (5,420 հա, որից 2063.4 հա՝ անտառածածկ) անտառտնտեսության ճյուղերում, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթաճյուղերի: Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել հողերի բաշխումն ըստ անտառտնտեսության ենթաճյուղերի:

Աղյուսակ 5. Միսիանի տարածաշրջան, յուրաքանչյուր պիլոտային համայնքում կենդանիների թվաքանակը, 2016թ.

	Մասնաճյուղ	Ընդհանուր տարածքը	Անտառածկույթը	Ընդհանուր տարածքը, Կապան	Անտառածկույթը, Կապան
Կապանի անտառտնտեսություն	Առաջաձոր	6,883	6,022,8	38,253	35,082
	Կապան	6,015	5,298,8		
	Դավիթ Բեկ	10,571	9,536,2		
	Սյունիք	4,465	4,229,5		
	Նորաշենիկ	2,672	2,635,5		
	Ճակատեն	7,647	7,359,2		
Սյունիքի անտառտնտեսություն	Գորիս	6,919	4,731,9	16,530	12,845,1
	Շուռնուխ	5,181	3,990,5		
	Առձվան	4,430	4,122,7		
Միսիանի անտառտնտեսություն	Միսիան	2,793	1,308,7	5,420	2,063,4
	Շաղատ	2,627	754,7		

Նույն աղբյուրի համաձայն՝ ստորև ներկայացված են ՀՀ ամբողջ տարածքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից իրականացված փայտանյութի հատման և շուկայահանման ծավալների օգտագործման դինամիկան.

Գծապատկեր 1. ՀՀ-ում փայտանյութի հատման և շուկայահանման ծավալները, 2011 – 2016 թթ., հա



Մյունիքի մարզում օդային քիմիական վերահսկման միջոցառումներ են իրականացվել տերևակեր վնասատուների և հիվանդությունների դեմ՝ 2012թ.-ին մոտ 2500 հա, իսկ 2013թ.-ին՝ 5810 հա անտառային ծածկույթի վրա: Վերահսկման օդային քիմիական մեթոդներն ապացուցել են իրենց բարձր արդյունավետությունը:

2.4 Տարածաշրջանում բնական պաշարների պահպանմանը խոչընդոտող հիմնական գործոնները. ախտահիշներից մինչև պատճառների վերլուծություն

Վերջերս անասնազրկաքանակը կտրուկ աճել է, և վերահսկման տակ գտնվող արոտավայրերի օգտագործումը և անկանոն տնօրինումը զգալիորեն վատթարացնում են բնական արոտավայրերի վիճակը: Արոտավայրերի անկանոն օգտագործումը հանգեցնում է երկու՝ որակական և քանակական փոփոխությունների ու դեգրադացիայի:

Այսպիսով, տարերային անասնաբուծության բազմազման արդյունքում առաջացած բարձր ռիսկերի ազդեցությունը բնական էկոհամակարգերի վրա նշանակալից աճել է: Որպես հետևանք, ընդհանուր կենսաբազմազանությունը, կերային համակարգը և անասնաբուծական արտադրությունը գտնվում են բարձր ռիսկի տակ, որը, ընդհանուր առմամբ, ինքնին իր ազդեցությունն է թողնում սոցիալ-տնտեսական իրավիճակի և բնակչության եկամուտների վրա:

Մյունիքի մարզում ոլորտային հիմնախնդիրներն հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով՝

- մայրաքաղաքից մեծ հեռավորությունը և այլընտրանքային տրանսպորտային միջոցների սակավությունը,
- ուրբանիզացիայի բարձր մակարդակը (բնակչության 67.4%-ը տեղակայված է քաղաքային բնակավայրերում, ինչը հանգեցնում է գործազրկության բարձր մակարդակի (12% 2014 թ.-ին) և բնակչության մեծ մասնաբաժնի ցածր եկամուտների),
- արտաքին ներդրումների և զարգացման ենթակառուցվածքների ցածր աստիճանը,
- մեծ թվով սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային չբնակեցված բնակավայրեր (80%):

Ինչպես ցույց տվեցին համայնքապետերի հետ ուղղակի հարցումների միջոցով համայնքներում իրականացրած առաջնային հետազոտությունները, այս և այլ հարակից հիմնախնդիրների արմատներն ավանդական մոտեցումների, բնակչության մտածելակերպի մակարդակի արդյունք են, ովքեր ընդհանրապես չեն մտածում բնական պաշարների ավելի ռացիոնալ օգտագործման մասին և բարձրացնում են դեգրադացիոն ռիսկի մակարդակը, նպաստում էկոլոգիական համակարգի հետընթացին, որին, իհարկե, կհաջորդի համայնքներում կյանքի որակի կրճատումը՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի և այլ փոխկապակցված ոլորտների առումով:

Այստեղ օգնության է գալիս գյուղատնտեսության և անասնապահության մեջ ընդգրկված բնակչության շրջանում խոր ըմբռնմանն ու իրազեկության բարձրացմանն ուղղված մի քանի զարգացման ծրագրերի և միջազգային կազմակերպությունների ներկայումս կիրառվող միտումը:

Քանի որ հանքարդյունաբերությունը հատկապես զարգացած է Մյունիքի մարզում, տարածաշրջանը նաև հայտնի է իր վտանգավոր և թունավոր պոչամբարներով, որոնք

հսկայական ռիսկ են շրջակա միջավայրի համար: Արծվանիկի պոչամբարն աշխարհի խոշորագույն պոչամբարների շարքում է: Այն գտնվում է Արծվանիկ գետի կիրճում և լի է 300 մլն. տոննա թունավոր զանգվածով: «Զանգեզուր» պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարի թունավոր զանգվածը տոննաներով հիմնականում թափվում է այստեղ:

Գեղանուշի պոչամբարը գտնվում է Կապան քաղաքին շատ մոտ և մեծ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի համար: Այն շահագործվում է «Դանդի Փրիշու մեթալս Կապան» կանադական կազմակերպության կողմից և կազմում է գրեթե 5 մլն. մ³:

Մի քանի այլ պոչամբարներ գտնվում են Ագարակի տարածքում, որտեղ ընդհանուր առմամբ թափվում են «Ագարակ» պղնձամոլիբդենային կոմբինատի պոչանքները:

Տարբեր արդյունաբերական արտադրությունների մնացորդներն ու թափոնները նույնպես մեծապես ազդում են շրջակա միջավայրի վրա, ինչի ուղղությամբ Սյունիքի մարզպետարանը շարունակաբար իրականացնում է համապատասխան միջոցառումներ: Օրինակ, 2016 թ.-ին հատուկ աջակցություն է ցուցաբերվել թափոնների վերամշակման, չեզոքացման, պահպանման և տեղափոխման աշխատանքներին, ինչպես նաև տեղական առողջապահական ընկերությունների կողմից ստորագրվել են վտանգավոր թափոնների վերամշակման և չեզոքացման գծով պայմանագրեր:

Հատուկ միջոցառումներ են ձեռնարկվել էկոլոգիական վճարումների կարգավորման և պետական բյուջե դրանց պատշաճ հոսքի ապահովման համար (ըստ մանրամասն հաշվարկների՝ բյուջե է մուտքագրվում ավելի քան 1.9 մլն. դրամ):

Պետական վիճակագրական տվյալների համաձայն, 2015 թ. անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետվող վտանգավոր նյութերի քանակը մեկ շնչի հաշվով Սյունիքի մարզում կազմում է 63.5 կգ, մինչդեռ միջին ցուցանիշը ՀՀ-ում 42,9 կգ է: Այս ցուցանիշով Սյունիքի մարզը 4-րդ տեղում է՝ Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերից հետո (համապատասխանաբար 206.9 կգ, 157.5 կգ, 96,9 կգ): Շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական ռեսուրսների օգտագործման վճարը մեկ շնչի հաշվով տարածաշրջանում կազմում է 728.7 դրամ, ինչը գրեթե 1.4 անգամ ավելի ցածր է ՀՀ միջին ցուցանիշից (1005,7 դրամ):


Հիդրոէլեկտրակայանների շահագործումնը իր հերթին առնվազն հատուկ նշանակություն ունի շրջակա միջավայրի ռիսկերի դեմ պայքարի համակարգում: Այս գործարաններից մեկը՝ «Տաթև» ՀԷԿ-ը, գտնվում է Որոտանի կիրճում՝ Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադների առաջնային մասում, Շամբի ջրամբարի ավազանում, որտեղ ջուրը հոսում է մինչև 18-կմ-երկարությամբ թունելի միջով և հասնում է Տաթև հիդրոէլեկտրակայանի տուրբիններ: Շամբի, Շաքիի, Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանները նույնպես տեղակայված են Միսիանի տարածաշրջանում՝ արտադրելով և մատակարարելով էներգիա ամբողջ տարածքում: Ինչ ընդհանուր առմամբ վերաբերում է Սյունիքի մարզին, ապա Մեղրիի ՀԷԿ-ը նույնպես գտնվում է այստեղ՝ էներգետիկա արտադրողների շարքում:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

3.1 Տարածաշրջանում տնտեսության զարգացած և զարգացող առանցքային ճյուղերը

2015թ. ՀՀ Սյունիքի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են հետևյալ տեսքը՝


Գծապատկեր 2. Տնտեսության հիմնական ճյուղերը Սյունիքի մարզում, տեսակարար կշիռը ՀՀ-ում, 2015



Մարզի տնտեսության առավել զարգացած ճյուղերն արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:


Արդյունաբերությունը Սյունիքի մարզում: Սյունիքի մարզի արդյունաբերության հիմնական ճյուղերը հանքարդյունաբերությունը և էլեկտրաէներգիայի արտադրությունն է: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի հիդրոէլեկտրակայանի կասկադին, որը տեղակայված է Միսիանի տարածաշրջանի տարածքում և թողարկում է տարեկան կտրվածքով 1 կՎտ. ժամ էլ.էներգիա՝ շնորհիվ իր մոտ 404.2 մՎտ գումարային հզորության. Ստորև կարող եք տեսնել մարզում արդյունաբերության մանրամասն նկարագրությունն ըստ իր տեսակների՝ արտահայտված միլիոն (մլն.) դրամով.

Գծապատկեր 3. Սյունիքի մարզի արդյունաբերության ճյուղերը, մլն. դրամ, %, 2015



Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում դիտարկել Սյունիքի մարզի արդյունաբերության դինամիկան ՀՀ ընդհանուր ցուցանիշների հետ՝

Գծապատկեր 4. Սյունիքի մարզի արդյունաբերության ծավալի դինամիկան, մլն. դրամ



Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Աղյուսակ 6. Սյունիքի մարզի գյուղատնտեսության ծավալը և տեսակարար կշիռը ՀՀ-ում, մլրդ. դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
<i>Հայաստանի Հանրապետություն</i>	795.0	841.5	919.1	993.5	1001.2
<i>Սյունիքի մարզ</i>	50.4	57.7	62.4	70.2	70.2
<i>Սյունիքի մարզ</i>	6.3 %	6.9 %	6.8 %	7.1 %	7.0 %

2015թ. դրությամբ, Սյունիքի մարզի գյուղատնտեսության մեջ գյուղատնտեսական կենդանիների տեսակարար կշիռը կազմում է 55 %, իսկ այգեգործության տեսակարար կշիռը՝ 45 %:

Համաձայն տարեկան մարզային վիճակագրական հրապարակումների՝ 2016թ. Սյունիքի մարզի գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը համապատասխանաբար կազմում է՝

Ա) Խոշոր եղջերավոր կենդանիներ– 63,000 գլուխ **Գ) Խոզեր**– 13,7000 գլուխ

ներառյալ՝ կովեր – 29,900

Դ) Չիեր– 2,600 գլուխ

Բ) Մանր եղջերավոր կենդանիներ, այծեր և ոչխարներ

–

133,400 գլուխ

Պիլոտային համայնքներում տիրող իրավիճակն առավել օբյեկտիվ գնահատելու համար համայնքապետարաններից ստացվել են հողագործության և անասնապահության գրանցամատյանները (բայց ոչ նույն ձևաչափով) և մանրամասն ուսումնասիրվել են:

Ստորև ներկայացվող աղյուսակում կարելի է տեսնել գյուղատնտեսական կենդանիների ընդհանրացված և ամբողջական բաշխումն ըստ կենդանիների և թռչունների տեսակների յուրաքանչյուր համայնքի կտրվածքով.

Աղյուսակ 7. Միսիանի տարածաշրջան, կենդանիների գլխաքանակն ըստ յուրաքանչյուր պիլոտային համայնքի, 2016


	Եղջերավոր	Եղջերավոր	Այծեր	Խոզեր	Չիեր	Ճագարն	Թռչուններ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
	որ	որ				են	եր	կենտանի	Մեղվափ	Էշեր	Ջորիներ	Գումեշնե	
<i>Գորայք</i>	1,375	1,648	0	14	38	0	1,491	0	298	1	0	0	
<i>Ծղուկ</i>	1,203	1,672	0	85	14	0	890	0	0	0	0	0	
<i>Սառնակունք</i>	1,227	2,210	9	91	18	114	1,202	0	222	0	0	0	
<i>Սպանդարյան</i>	910	1,112	1	73	17	10	1,110	0	598	1	0	0	
<i>Բռնակոթ</i>	3,170	3,690	45	213	55	250	2,600	0	1,200	7	0	0	
<i>Թասիկ</i>	611	315	0	53	6	0	774	0	243	0	0	0	
<i>Շաքի</i>	1,535	2,583	31	317	32	41	3,744	0	821	6	0	0	
<i>Տոլորս</i>	350	1,199	31	32	8	25	920	0	170	2	0	0	
<i>Մալվարդ</i>	673	1,179	0	70	34	0	1,061	0	784	2	0	0	

Աշոտավան	390	885	0	18	8	24	1,920	0	530	0	0	0
Նորավան	536	830	17	119	24	0	1,105	0	350	1	0	0
Նժդեհ	295	202	58	26	21	0	227	0	261	0	0	0
Ընդամենը	12,275	17,525	192	1,111	275	464	17,044	0	5,477	20	0	0

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, խոշոր և մանր եղջերավոր կենդանիներն էական նշանակություն ունեն պիլոտային համայնքների համար և արդյունքում հանդիսանում են գյուղական բնակչության ապրուստի միջոցների կարևորագույն աղբյուր:

Վերոնշյալ կենդանիների մի քանի տեսակներ պետք է դիտարկել առանձին-առանձին ըստ իրենց դերի, եկամտաբերության և տնտեսական նշանակություն: Օրինակ, երկարաժամկետ նպատակներով, կարելի է վերլուծել, թե ինչ հետագա զարգացման ներուժ և եկամտաբերություն ունի անասնաբուծությունը: Այստեղ պետք է առանձնակի ուշադրություն դարձնել կովերին, արտադրական ցուլերին, հավերին և այլն: Ստորև ներկայացված տվյալները բավականին ընդգրկուն են այդ ներուժը տեսնելու համար.

Գծապատկեր 5. Արտադրական նշանակության կենդանիներ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ



Շատ արժեքավոր է դիտարկել գյուղատնտեսական ապրանքների ծավալը՝ համեմատելով ՀՀ-ի համար նույնանման ցուցանիշի հետ: Անասնաբուծական ապրանքները ներկայացված են ամբողջ Սյունիքի Մարզում:

Աղյուսակ 8. Կենդանական ծագման արտադրանք, Սյունիքի մարզ, 2016

Արտադրանքներ	Քանակ, հազ. գլուխ		Սյունիքի մարզի կենդանիների տեսակարար կշիռը ՀՀ-ում, 2016
	Սյունիքի մարզ	ՀՀ	%
Կենդանիներ և թռչուններ սպանդային քաշով, հազ. տ	17.7	176.1	10.1%
Կաթ, հազ. տ	74	728.6	10.2%
Չու, մլն. հատ	42.7	659.8	6.5%
Բուրդ, տ	255.8	1,571	16.3%

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին անցնում է մարզի տարածքով, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինին:

Արցախը Հայաստանին կապող կարևորագույն ավտոմայրուղին և ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետությունն անմիջական կապով միմյանց կապող միակ ճանապարհն անցնում է մարզի տարածքով:

Համայնքներում պաշտոնական մանրամասն տվյալների բացակայության պատճառով, մենք պետք է ուսումնասիրենք շինարարությունը, մանրածախ առևտուրն ու ծառայություններն առավել լայն մասշտաբներով՝ համեմատելով Սյունիքի մարզի դինամիկան ՀՀ հետ:

Աղյուսակ 9. Շինարարության տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն. դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	504,824.5	479,415.6	453,449.3	463,858.0	481,496.9
Սյունիքի մարզ	38,110.3	28,289.2	24,697.1	16,202.7	24,784.7
Սյունիքի մարզ, %	7.5 %	5.9 %	5.4 %	3.5 %	3.1 %

Աղյուսակ 10. Մանրածախ առևտրի տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն. դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	1,302,252.1	1,379,500.3	1,452,528.3	1,466,090.6	1,313,998.1
Սյունիքի մարզ	12,102.4	15,361.0	20,698.8	27,404.5	15,370.4
Սյունիքի մարզ,%	0.93 %	1.11 %	1.43 %	1.87 %	3,17 %

Աղյուսակ 11. Ծառայությունների տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ծավալում, մլն. դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	840,033.4	941,280.0	988,158.3	1,090,528.6	1,144,605.3
Սյունիքի մարզ	9,405.1	11,695.6	13,585.6	14,564.9	19,095.9
Սյունիքի մարզ,%	1.12 %	1.24 %	1.37 %	1.34 %	1.67 %

Ինչ վերաբերում է 2015թ. ընթացքում իրականացված շինարարությանը, ապա Սյունիքի մարզում այն կազմել է 24,784.2 մլն. Դրամ՝ գրավելով 3-րդ տեղը Երևանից (306,664.5 մլն. դրամ) և Լոռու մարզից (26,876.1 մլն. դրամ) հետո:


Մանրածախ առևտրի հետ կապված՝ վերջին վիճակագրությունը ցույց է տալիս տարածաշրջանում շուկաների հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 12. Մանրածախ վաճառքի կետեր, քանակը Սյունիքի մարզում

	2011	2012	2013	2014	2015
<i>Խանութներ</i>	173	167	183	201	226
<i>Կրպակներ</i>	196	174	168	151	135
<i>Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ</i>	1	0	0	0	0
<i>Սպառողական ապրանքների շուկաներ</i>	4	4	8	7	7
<i>Այլ մանրածախ կետեր</i>	41	38	39	40	47
Ընդամենը, մանրածախ կետեր	415	383	398	399	415

Ծանոթանալով ծառայությունների բաշխման տեսակներին և ուղղություններին, որ նախատեսված են Սյունիքի մարզում, պետք է դիտարկել, այն, որ ոլորտում ընդհանուր շրջանառության մեջ մեծագույն մասնաբաժինը պատկանում է տրանսպորտի ծառայություններին և ֆինանսական ու ապահովագրական գործունեությանը:

Գծապատկեր 6. Սյունիքի մարզում ծառայությունների բաշխումն ըստ տեսակների 2016թ. դրությամբ, մլն. դրամ և %



Արտահանումը Սյունիքի մարզից 2015թ. կազմել է 127,261.3 մլն. դրամ (2-րդ տեղը Երևանից հետո, 343,908.3, ՀՀ ընդհանուր արտահանման ավելի քան 18 %-ը), իսկ ՀՀ ընդհանուր արտահանման ծավալը կազմել էր 705,116.8 մլն. դրամ:

Աղյուսակ 13. Արտահանման ծավալը և տեսակարար կշիռը ՀՀ-ում⁴, մլն. դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	489,032.3	550,560.0	594,392.0	632,840.4	705,116.8
Սյունիքի մարզ	103,329.5	106,332.4	116,906.3	113,320.5	127,261.3
Սյունիքի մարզ, %	21.1 %	19.3 %	19.7 %	17.9 %	18.0 %

Սյունիքի մարզում ներմուծման ծավալը 2015թ.-ին կազմել է 28543, 9 մլն. դրամ, իսկ ամբողջ ՀՀ տարածքում՝ 1500295 մլն. դրամ:

Աղյուսակ 14. Ներմուծման ծավալը և տեսակարար կշիռը ՀՀ-ում, մլն. դրամ և %

	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	1,482,396.3	1,638,843.6	1,705,848.2	1,735,308.6	1,500,295.3
Սյունիքի մարզ	36,352.4	37,762.6	30,964.5	31,353.1	28,543.9
Սյունիքի մարզ, %	2.5 %	2.3 %	1.8 %	1.8 %	1.9 %

Վիճակագրորեն համեմատելով Սյունիքի մարզի տնտեսության այլ կարևոր ցուցանիշները ՀՀ-ի համար նույնանման ցուցանիշների հետ՝ նկատում ենք, որ սպառողական

⁴ Զի ներառում ֆիզիկական անձանց առևտուրը


գների ինդեքսը Սյունիքի մարզում 2015թ.-ին 2014թ.-ի համեմատությամբ կազմել է 103.8 %, որից պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտը և ոգելից խմիչքները) սպառողական գների ինդեքսը 2015թ.-ին 2014թ.-ի համեմատությամբ կազմել է 103.7 %, որի արդյունքում Սյունիքի մարզը գրավել է 2-րդ տեղը՝ Արարատի հետ միասին:

Ոչ պարենային ապրանքների սպառողական գների ինդեքսը, Սյունիքի մարզում 2015թ.-ին՝ 2014թ.-ի համեմատությամբ կազմել է 106.1 %: Բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների ինդեքսը Սյունիքի մարզում 2015թ.-ին՝ 2014թ.-ի համեմատությամբ կազմել է 102.2 %:

3.2 Ժողովրդագրություն, կրթություն, զբաղվածություն, միգրացիա, կենսամակարդակի, եկամուտները և ծախսերը, կախվածությունը բնական ռեսուրսներից՝ գոյատևման և ապրուստի միջոցների համար, Էներգետիկ աղբյուրներ և հարակից ոլորտներ (համակցված վիճակագրություն և վերստուգված փաստացի տվյալների հիման վրա)

Ժողովրդագրություն: Հաշվի առնելով, որ Սիսիանի տարածաշրջանն համարվում է մեր ընթացիկ ուսումնասիրության առարկան, պետք է անդրադառնանք նաև բնակչության ընդհանրացված և ամբողջական նկարագրությանն ու դինամիկային 2011-2016 թթ. ընթացքում (ներառյալ պիլոտային համայնքները և Սիսիան քաղաքը⁵):

Գծապատկեր 7. Բնակչության ընդհանուր թվաքանակը պիլոտային համայնքներում և Սիսիան քաղաքում, մարդ



Հարկ է նշել, որ դինամիկան հիմնված է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տվյալների վրա, որտեղ կարելի է նկատել աննշան տարբերություններ⁶ համեմատած այն առաջնային տվյալների հետ, որոնք ստացվել են ուղղակիորեն համայնքներում:

Պիլոտային համայնքների ավելի խորը և փաստացի պատկերը մշտական ու փաստացի բնակչության և նրանց զբաղվածության բնագավառի վերաբերյալ, թվերով արտահայտված, կարելի է գտնել ստորև ներկայացված աղյուսակում՝ հիմնված համայնքային գրանցամատյաններում հայտնաբերված տվյալների վրա:

⁵ Սյուուհետ տվյալները հիմնված կլինեն հիմնականում պիլոտային համայնքների վրա՝ չընդգրկելով Սիսիան քաղաքը


⁶ Բնակչության թվաքանակը տարբերվում է Ծղուկ, Սպանդարյանի, Շաքիի և Նժդեհի համայնքներում, որը կարող է բացատրվել համայնքային ռեգիստրների կոշտ և երբեմն սխալ հաշվարկներով

Աղյուսակ 15. Բնակչության թվաքանակը պիլոտային համայնքներում, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ

	Մշտական բնակչություն (այդ թվում՝ ժամանակավորապես բացակա լողները),	Մշտապես առկա բնակչություն, մարդ	Ժամանակավորապես կայողներ, մարդ	Երկարաժամկետ բացակայողներ, մարդ	Ներկա / փաստացի բնակչություն (ներառյալ ժամանակավորապես ներկաները, մարդ	Զբաղվածներ (բացառությամբ ժամանակավորապես ներկաների)	Գյուղատնտեսության մեջ զբաղվածները	Այլ, ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածները	Կազմակերպություններում զբաղվածները
<i>Գորայք</i>	493	420	73	29	468	315	255	60	60
<i>Ծղուկ</i>	388	360	28	4	408	280	221	59	59
<i>Սառնասկունք</i>	504	425	79	0	472	252	219	33	33
<i>Սպանդարյան</i>	454	436	16	12	468	252	220	32	32
<i>Բռնակոթ</i>	2,041	1,855	186	45	2,249	1,715	1,556	159	159
<i>Թասիկ</i>	292	234	58	7	267	139	114	25	25
<i>Շաքի</i>	1,349	1,176	173	36	1,232	636	561	75	75
<i>Տոլորս</i>	393	375	18	3	388	275	235	40	40
<i>Սալվարդ</i>	243	181	62	85	210	140	110	30	30
<i>Աշոտավան</i>	635	552	83	24	596	396	311	85	85
<i>Նորավան</i>	463	465	58	12	429	285	179	106	106
<i>Նժդեհ</i>	161	94	67	21	119	62	56	6	6
Ընդամենը	7,416	6,573	901	278	7,306	4,747	4,037	710	710

Պիլոտային համայնքներում տնային տնտեսությունների թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են ըստ երկու հիմնական չափանիշների՝ տնային տնտեսությունների ընդհանուր գրանցված և յուրաքանչյուր համայնքում դրանց փաստացի առկա թվաքանակով: Այս տվյալները նույնպես հիմնված են այնպիսի սկզբնաղբյուրների վրա, ինչպիսիք են՝ համայնքների և դրանցում ընդգրկված բնակավայրերի վերջին թարմացված գրանցամատյանները:

Գծապատկեր 8. Տնային տնտեսությունների քանակը պիլոտային համայնքներում, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ



Ինչ վերաբերում է ժողովրդագրությանը, ապա հետաքրքիր է դիտարկել յուրաքանչյուր համայնքն ըստ տարիքային և սեռային խմբերի, որը կարող է օգտակար լինել այստեղ մեկնարկած ցանկացած ծրագրի պոտենցիալ նպատակային գործունեության գնահատման և բաշխման ժամանակ: Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել անմիջականորեն համայնքի գրանցամատյանները:

Աղյուսակ 16. Ժողովրդագրությունը պիլոտային համայնքներում, տարիքը և գենդերային խումբը, 2016

	0-15 տարեկան/տղամարդիկ	0-15 տարեկան/կանայք	16-62 տարեկան/տղամարդիկ	16-62 տարեկան/կանայք	63 տարեկան/բարձր/տղամարդիկ	63 տարեկան/բարձր/կանայք	15-49 տարեկան
<i>Գորայք</i>	52	44	131	175	32	34	252
<i>Ծղուկ</i>	39	30	126	154	29	30	208
<i>Մառնա կունք</i>	62	39	161	152	26	32	218
<i>Սպանդարյան</i>	50	29	188	140	25	36	261
<i>Բոնակոթ</i>	219	240	663	778	157	192	887
<i>Թասիկ</i>	17	30	89	98	13	20	39
<i>Շաքի</i>	153	111	408	414	61	85	494
<i>Տոլորս</i>	36	38	114	133	34	33	256
<i>Սալվարդ</i>	21	18	70	55	23	23	76
<i>Աշոտավան</i>	63	54	172	244	25	38	322
<i>Նորավան</i>	72	70	106	134	16	31	201
<i>Նժդեհ</i>	24	17	34	21	5	18	48
Ընդամենը	808	720	2,262	2,498	446	572	3,262

Վերջին վիճակագրական տվյալների համաձայն՝ Սյունիքի մարզում բնակչության խտությունը շատ ավելի ցածր է համեմատած գրեթե բոլոր մյուս մարզերի և ՀՀ միջին խտության ցուցանիշի հետ, որը կազմում է 101 մարդ/կմ², բացառությամբ Վայոց Ձորի մարզի, որն ունի ամենացածր խտությունը՝ 22 մարդ/մ²:

Ինչ վերաբերում է որոշ ժողովրդագրական ցուցանիշներին, ինչպիսիք են կենդանածնության թվաքանակն ըստ սեռի և մահերի թիվն ըստ սեռի, ապա հարկ է նշել, որ Սյունիքի մարզն ունի հետաքրքիր վիճակագրություն: Առաջինը կազմում է 1,421 մարդ, որի 48.1%-ը կանայք են, իսկ վերջինս կազմում է 1,284 մարդ, որի 47,5% -ը կազմում են կանայք / իգական:

Բնակչության բնական աճն ըստ սեռի Սյունիքի մարզում 2015 թ.-ին կազմել է 63 տղամարդ և 74 կին, որը ՀՀ ամենացածր ցուցանիշն է՝ համեմատած մյուս բոլոր մարզերի ցուցանիշների հետ, և հաշվի առնելով դրա մասնաբաժինը ՀՀ ընդհանուր բնական աճի ցուցանիշում, ինչը կազմում է 13,885 մարդ, (ոչ պակաս, քան 1%):

Մանկական մահացությունը 1000 կենդանի ծնվածի հաշվով կազմում է 7 միավոր, որն ընդամենը 1,8 միավորով է ցածր ՀՀ միջին ցուցանիշից, և բավականին դրական է՝ համեմատած մահացության շատ ավելի բարձր ցուցանիշ ունեցող 7 այլ մարզերի հետ:

Կրթություն: Ինչ վերաբերում է կրթությանը, հարկ է նշել, որ կոնկրետ տվյալներ պիլոտային համայնքներում չեն գտնվել, սակայն այս ոլորտը կարող ենք ուսումնասիրել

ամբողջ Շիրակի մարզի կտրվածքով՝ նշելով կրթական հաստատությունների բաշխումն՝ ըստ իրենց տեսակի, հիմնական միջնակարգ դպրոցների տվյալների և բարձրագույն կրթության քանակական տվյալների՝ համեմատած ՀՀ ընդհանուր քանակի հետ:

Աղյուսակ 17. Պետական հանրակրթական դպրոցների հաճախելիությունը Սյունիքի մարզում, 2015/2016 ուսումնական (ուս.) տարի

	Սյունիքի մարզ	ՀՀ	Համեմատական %
Աշակերտների թիվը դպրոցներում	16,477.0	364,398.0	4.5%
Միջին հաճախելիությունը՝ ըստ մեկ դպրոցի	136.2	253.4	53.7%
Դասարանների քանակը՝ ըստ մեկ դպրոցի	12.5	13.9	89.9%
Միջին հաճախելիությունը՝ ըստ մեկ դպրոցի	10.9	18.2	59.9%
Աշակերտների քանակը՝ մեկ մանկավարժի համար	7.4	9.4	78.7%
Մանկավարժների քանակը՝ ըստ մեկ դպրոցի	18.4	26.9	68.4%

Բարձրագույն կրթության առումով 2015/2016 թթ. ընթացքում վճարովի և անվճար համակարգում սովորող ուսանողների թվաքանակը ներկայացված է ստորև՝ համեմատած ՀՀ ընդհանուր ցուցանիշների հետ.

Աղյուսակ 18. Ուսանողների քանակը Սյունիքի մարզի բարձրագույն մասնագիտական հաստատություններում, 2015/2016 ուս. տարի						
	Վճարովի և անվճար հիմունքներով ուսանողների քանակը, Մարդ				Ուսանողների ընդհանուր քանակ, մարդ	
	Անվճար ուսուցում		Վճարովի ուսուցում		Ընդհանուր	Իզական սեռի
	Ընդհանուր	Իզական սեռի	Ընդհանուր	Իզական սեռի		
Սյունիքի մարզ	149	93	1,652	803	1,801	896
ՀՀ	10,017	4,929	74,574	41,251	84,591	46,180
Սյունիքի մարզ, %	1.5%	1.9%	2.2%	1.9%	2.1%	1.9%

Հարկ է նշել, որ Սյունիքի մարզում առկա են բավականին հետաքրքիր ու խոստումնալից տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ Սյունիքի մարզն ունի «պայծառ ուղեղներ» և ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում խելացի մարդկային ռեսուրսների մեծ ներուժ:

Մշակութային, կրթական հաստատություններից արվեստի, երաժշտության և այլ հաստատությունները բավական ակտիվ են գործում տարածաշրջանում:

Պետական նախադպրոցական հիմնարկներում/հաստատություններում երեխաների թվաքանակը 100 տեղի հաշվով կազմում է 89.3, ինչը շարունակում է մնալ 0.1 միավորով ավելի բարձր ՀՀ միջին թվից՝ զիջելով միայն Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզերը մի քանի միավորով:

Պետական հանրակրթական դպրոցներում աշակերտների թվաքանակը 2015/2016 ուսումնական տարվա համար մեկ ուսուցչի հաշվով կազմում է 7.4 մարդ, մինչդեռ ՀՀ միջին ցուցանիշը 9.4 մարդ է, և այս ցուցանիշով Սյունիքի մարզն 8-րդն է:

Յուրաքանչյուր երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների և մանկական ու երիտասարդական զարգացման կենտրոնի հաշվով աշակերտների թվաքանակը Սյունիքի մարզում 2015/2016 ուսումնական տարվա համար կազմում է 137.3 մարդ, իսկ միջին ցուցանիշը ՀՀ-ում 200.9 մարդ է: Ըստ այս ցուցանիշի Սյունիքի մարզը զիջում է մայրաքաղաք Երևանին, Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի և Վայոց Ձորի մարզերին:

Յուրաքանչյուր միջնակարգ մասնագիտացված հիմնարկում/հաստատությունում ուսանողների թվաքանակը 2015/2016 ուսումնական տարվա համար Սյունիքի մարզում կազմում է 180.6 մարդ, ինչը զիջում է ՀՀ միջին ցուցանիշը՝ 250.5 մարդ:

Յուրաքանչյուր բարձրագույն մասնագիտական կրթական հաստատությունում ուսանողների թվաքանակը 2015/2016 ուսումնական տարվա համար Սյունիքի մարզում կազմում է 450.3 մարդ՝ 38,2% ՀՀ միջին ցուցանիշում, ինչը կազմում է 1174.9 մարդ:

Պետք է նաև ուշադրություն դարձնել մարզի մշակութային կյանքին, վարքագծին և միտումներին՝ բնակչության կրթական մակարդակի և նրանց սոցիալ-տնտեսական ակտիվությանը վերաբերող ընդհանուր ցուցանիշների քննարկման ժամանակ:

Թանգարան հաճախումների քանակը 1000 մարդու հաշվով Սյունիքի մարզում 2015 թ.-ին կազմել է 72.1 մարդ, ինչը ՀՀ միջին ցուցանիշից 10% պակաս է:

Թատրոններ հաճախումների քանակը 1000 մարդու հաշվով Սյունիքի մարզում 2015թ.-ին կազմել է 218.9 մարդ, ինչը 128.3 % -ով գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը (170.6 մարդ) և Սյունիքի մարզը այս ցուցանիշով երկրորդ առաջատարն է Երևանից (373.7 մարդ) հետո:

Գրադարաններ հաճախումների քանակը 1000 մարդու հաշվով Սյունիքի մարզում 2015թ.-ին կազմել է 2597.3 մարդ, ինչը համարյա 1.6 անգամ ավելի շատ է, քան ՀՀ միջին ցուցանիշն է (1621.7 մարդ), և որը Սյունիքի մարզը տվյալ ցուցանիշով դարձնում է երկրորդը Վայոց ձորից հետո (3506.8 մարդ):

Մարզական կազմակերպություններում մարզիկների թվաքանակը 2015 թ.-ին Սյունիքի մարզի 10 հազ. բնակչության հաշվով կազմում է 125,6 մարդ, ինչը մի փոքր ցածր է, քան ՀՀ միջին ցուցանիշը (136.8 մարդ):

Զբաղվածություն: Ինչպես երևում է Աղյուսակ 14-ից, պիլոտային համայնքներում գյուղատնտեսական գործունեությունը զգալի մասնաբաժին է կազմում զբաղվածության մեջ: Այնուամենայնիվ, հետաքրքրական է ողջ տարածաշրջանի մասով վերլուծել այնպիսի կարևոր ցուցանիշները, ինչպիսիք են գործազրկության մակարդակն ու միջին անվանական աշխատավարձը մեկ ամսվա ընթացքում: Այստեղ կրկին օգնության է գալիս


վիճակագրությունը⁷ ընդհանուր պատկերացում կազմելու և ՀՀ ամբողջական ցուցանիշների հետ համեմատելու համար:

Աղյուսակ 19. Գործազրկության մակարդակը Սյունիքի մարզում ըստ սեռի, %, 2014 – 2015թթ.

	2014			2015		
	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը
ՀՀ	15.8	19.5	17.6	17.6	19.5	18.5
Սյունիքի մարզ	12.4	24.8	18.3	18.0	12.2	15.7

Հետաքրքիր է նաև դիտարկել միջին անվանական աշխատավարձի չափի դինամիկան ողջ Հայաստանում և Սյունիքի մարզում 2013 թ. - 2015 թ. համար:

Գծապատկեր 9. Միջին անսական անվանական աշխատավարձը Սյունիքի մարզում, դրամ, 2013 – 2015 թթ



⁷ Տվյալները հասանելի են միայն 2014 և 2015 թթ. համար:

Միգրացիա: Միգրացիայի հետ կապված հարցերի քննարկման համար հիմք են ծառայել համայնքի ղեկավարների հետ ունեցած անձնական հարցազրույցները: Վերջիններիս դիտարկումների համաձայն՝ Բոնակոթ համայնքում և Գորայքի համայնքի Սպանդարյան բնակավայրում միգրացիայի մակարդակը բավականին բարձր է, միակ մեղմացուցիչ հանգամանքն այն է, որ դա սեզոնային բնույթ է կրում, և միգրանտները համարյա ամեն ձմեռ վերադառնում են իրենց հայրենի տուն: Նույն դիտարկումների հիման վրա, զբաղվածության կամ ինքնազբաղվածության հիմնական հնարավոր ուղղությունները համայնքների մեծ մասում գյուղատնտեսությունն ու անասնապահությունն են: Միայն Նորավան համայնքում կա ռազմական միավոր, որտեղ երիտասարդները հակված են աշխատելու, իսկ Գորայք համայնքում հսկայական ոսկու հանքավայրը պատրաստվում է շուտով շահագործման հանձնվել, որը ևս մեկ մեծ հնարավորություն է նրանց երիտասարդության համար, որպեսզի չլքեն երկիրը՝ աշխատելու համար:

Աղյուսակ 20. Համայնքներում սիգրացիայի կարգավիճակն ըստ ծավալի, նպատակների, ուղղությունների և հնարավորությունների, 2016թ.

	Միգրացիայի մակարդակը	Միգրացիայի ուղղությունը	Միգրացիայի ծավալը, մարդ	Միգրացիայի նպատակը	Հնարավորությունները գյուղում
Գորայք	Ցածր		12 մարդ, սեզոնային		Ոսկու հանքավայրի վերագործարկում
Ծղուկ	Ցածր		5 %, սեզոնային	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Սառնակունք	Ցածր	Ռուսաստան	15 %, սեզոնային	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Սպանդարյան	Բարձր	-	երիտասարդության 90 %-ը	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Բոնակոթ	Բարձր	Ռուսաստան, Լեռնային Ղարաբաղ	300 սեզոնային	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Թափկ	Ցածր	-	1-2 %	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Շաքի	Ցածր	Ռուսաստան, Լեռնային Ղարաբաղ	5 %, սեզոնային	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Տոլորս	Բացակայում է	-	-	-	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Սավարդ	Ցածր	-	ներկա պահին 4 մարդ	արտազնա աշխատանք	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Աշոտավան	Բացակայում է	-	-	-	Գյուղատնտեսություն և Անասնապահություն
Նորավան	Ցածր	-	5 մարդ	արտազնա աշխատանք	Ռազմական կետ
Նժդեհ	Բացակայում է	-	-	-	Գյուղատնտեսություն և Անասնապահություն

Կենսամակարդակ, աղքատության մակարդակ: Ինչ վերաբերում է կենսամակարդակին, աղքատության մակարդակի դիտարկումը⁸ տարածաշրջանում շատ արժեքավոր է:

Աղյուսակ 21. Մյունիքի մարզի աղքատության մակարդակը հանրապետական միջինի նկատմամբ, %, 2012 – 2015թթ.

	2012			2013			2014		
	Աղքատ	Որից՝ ծայրահեղ աղքատ	Ոչ աղքատ	Աղքատ	Որից՝ ծայրահեղ աղքատ	Ոչ աղքատ	Աղքատ	Որից՝ ծայրահեղ աղքատ	Ոչ աղքատ
<i>Հանրապետական միջին</i>	32.4	2.8	67.6	32.0	2.7	68.0	30.0	2.3	70.0
<i>Մյունիքի մարզ</i>	25.6	0.7	74.4	25.2	1.8	74.8	24.2	1.0	75.8

Հատկանշական է նաև այն, որ գյուղական համայնքների զգալի մասը հիմնականում ապրում է գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացված միջոցներով: Սակայն, քանի որ պաշտոնական թվերը և/կամ հարակից տվյալները հնարավոր չէր ստանալ ո՛չ առաջնային, և ո՛չ էլ երկրորդական աղբյուրներից, դիտարկենք մեկ շնչի հաշվով եկամտի բաշխումն ըստ իրենց աղբյուրների Մյունիքի մարզի կտրվածքով՝ հիմնված վերջին վիճակագրության վրա:

Աղյուսակ 22. Մյունիքի մարզում մեկ տնային տնտեսության հաշվով եկամտի աղբյուրները, դրամ, 2015թ


	Զբաղվածությունից ստացված եկամուտներ	Ինքնազբաղվածությունից ստացված եկամուտներ	Գյուղատնտեսական մթերքի և կենդանիների վաճառքից ստացված եկամուտներ	Մեփակա նությունից ստացված եկամուտներ (վարձավճարներ, տոկոսադրույքներ, շահաբաժիններ)	Պետական նպաստներ և թոշակներ	Տրանսֆերներ	Այլ եկամուտներ	Ընդամենը
<i>Հանրապետական միջին</i>	28,800	4,842	2,674	115	9,284	4,698	1,964	52,377

⁸ Տվյալները բացակայում են 2015 հաշվարկային տարվա համար:

Սյունիքի մարզ	49,599	4,098	4,022	187	9,523	4,567	65	72,061
---------------	--------	-------	-------	-----	-------	-------	----	--------

Ստորև ներկայացված գծապատկերից ակնհայտ է, որ տնային տնտեսությունների եկամտի զգալի մասնաբաժինը Սյունիքի մարզում կազմում է պետական և մասնավոր կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը: Տվյալները բացահայտվել են Սյունիքի մարզի տնային տնտեսությունների շրջանում կատարված ամենամյա լայնամասշտաբ հետազոտությունների արդյունքում, որոնք կազմակերպում և իրականացնում են տարածքային կառավարման մարմինները:

Գծապատկեր 10. Սյունիքի մարզ, մեկ շնչի հաշվով եկամուտների բաշխումն ըստ աղբյուրների, դրամ, 2015



Ամբողջ տարածաշրջանի կենսամակարդակի ուսումնասիրման ժամանակ, հատկանշական է տեղաբնակների սոցիալական բնութագրերի այնպիսի կողմերի բացահայտումը, ինչպիսին, օրինակ, ընտանեկան կյանքին նրանց հակումն է:

Ըստ գրանցված ամուսնությունների քանակի՝ վերջին վիճակագրական տվյալների համաձայն, Սյունիքի մարզի ցուցանիշը ՀՀ-ում ամենացածր ցուցանիշներից մեկն է, ամբողջ 2015 թ-ի ընթացքում՝ գրանցվելով 590 դեպք հանրապետությունում գրանցված 17603 դեպքերից (ըստ էության 3.35%):

Գրանցված ամուսնալուծությունների տեսանկյունից, համամասնական պատկերը մի փոքր այլ է, ՀՀ 2015 թ. ընթացքում կազմելով 146 դեպք՝ գրանցված ամբողջ 3670 դեպքերից, ինչը կազմում է մոտ 4%:

3.3 Ուղրտում գործող հաստատությունները, առանցքային խնդիրները և կարիքները

Միսիանը կրթության առումով կարելի է համարել միջին ակտիվության քաղաքներից մեկը, որտեղ տեղակայված են մանկապարտեզներ, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական հաստատություններ, մեկ պետական համալսարանի մասնաճյուղ, երաժշտության և արվեստի դպրոցներ ու կենտրոններ:

Միսիանի պետական քոլեջը նախնական և միջին մասնագիտական հաստատություն է:

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթությանը, Հայաստանի պետական ագրարային համալսարանն ունի իր մասնաճյուղը Միսիանում, ինչպես Երևանի պետական համալսարանի ճարտարագիտական մասնաճյուղը Կապանում և Գորիսում:

Հայաստանի պետական ագրարային համալսարանի մասնաճյուղը Միսիանում գտնվում է հետևյալ հասցեում՝ ՀՀ, ք. Միսիան, Շիրվանգաղե 7:

Ինչ վերաբերում է էներգիայի աղբյուրներին, Տաթևի ՀԷԿ-ի գործարանը գտնվում է Որոտանի կիրճում՝ Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադների առաջնային մասում, Շամբի ջրամբարի ավազանում, որտեղ ջուրը հոսում է մինչև 18-կմ-երկարությամբ թունելի միջով և հասնում է Տաթև հիդրոէլեկտրակայանի տուրբիններ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական արտադրանքի գնման կետերին, ապա Աշոտավանում չկա կաթի հավաքման ոչ մի կետ, իսկ միսը հիմնականում սպառվում է Միսիանի տարածաշրջանի ներսում՝ տեղական բնակչության շրջանում: Աշոտավան գյուղում երիտասարդների և երեխաների համար չկա ոչ մի մշակութային կենտրոն, դպրոցներ կամ դասեր (արվեստի, երաժշտության, գեղանկարչության, և այլն), որը մեկն է այն բացթողումներից, հիմնախնդիրներից, ինչը պետք է վերացնել:

Բռնակոթ համայնքում կա կաթի հավաքման կետ, որտեղ հանձնում են իրենց կաթը բոլոր ֆերմերները: Չկա մսի սպառման որևէ կետ, բայց պահանջարկը բարձր է, և միսը վաճառվում է տեղում՝ հենց գյուղում:

Մշակութային կյանքի առումով Բռնակոթ գյուղում է գտնվում Հայրենական մեծ պատերազմի զոհերին և գյուղի 109 բժիշկ-գիտնականներին նվիրված թանգարանը: Այստեղ կան նաև այլ հուշարձաններ և գյուղի պանթեոն:

Ինչ վերաբերում է Թասիկ համայնքին, այնտեղ գործում էր կաթի հավաքման կետ, որը ներկայումս չի գործում, և ԷԼՈԼԱ փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ) միակն է, որ ֆերմերներից կաթ է հավաքում:

Կաթի հավաքումը Սպանդարյան բնակավայրում իրականացվում է Բորսիկովա սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ), Միսիան-կաթ ՍՊԸ-ի և ԷԼՈԼԱ ՓԲԸ-ի կողմից:

Տոլորս համայնքում կա CARD հիմնադրամի կողմից 2001 թ.-ին կառուցված կաթի հավաքման կետ, որը հազեցած է սառնարաններով, կաթի անալիզատորներով, ճշգրտորեն վերանորոգվել է և արդիականացվել համակարգչային տեխնիկայով: Ֆերմերից կաթը հավաքում են ԷԼՈԼԱ ՓԲԸ-ն, ինչպես նաև՝ Միսիան-կաթ ՍՊԸ-ն: Մսի սպառումը հիմնականում իրականացնում են տեղի եզդիները:

Շաքի համայնքում կաթը հիմնականում հավաքվում է Միսիան-կաթ ՍՊԸ-ի և Աշտարակ կաթ ՓԲԸ-ի կողմից: Միսը վաճառում են ճանապարհներին, իսկ մրգերն ու բանջարեղենը՝ տեղում՝ գյուղում:

Սառնակունքում կաթը նույնպես հավաքվում և սպառվում է Միսիան-կաթ ՍՊԸ-ի միջոցով:

Ինչ վերաբերում է Նորավան համայնքին, ապա այստեղ կաթի սպառումըս կազմակերպվում է Էլոլա ՓԲԸ-ի կողմից:

4. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ


4.1 Հողերի տեսակները և օգտագործման ուղղությունները: Ընդհանուր նկարագիր և քարտեզագրում

Միսիանի տարածաշրջանը գտնվում է ծովի մակերևույթից 1600մ բարձրության վրա (բարձրացում): Հարակից համայնքները տատանվում են 1600-2200 մ միջև: Այստեղ կարելի է գտնել 9 տեսակի սևահողեր, որոնք հիմնականում հարուստ են օրգանական նյութերով (4,9 - 7,5%) և պատկանում է բարձր ներծծող / ջուր կլանող տեսակին:

Գյուղատնտեսական նշանակության հողերն ընդհանրապես հատուկ նշանակություն ունեն տարածաշրջանի համար և կազմում են միասին վերցրած բոլոր հողատեսակների գրեթե 95%-ը:

Պիլոտային համայնքներում հողային ռեսուրսները և դրանց բաշխումն ըստ իրենց օգտագործման բացահայտելու համար օգտագործվել են ինչպես վիճակագրական տվյալներ, այնպես էլ համայնքապետարաններից ստացված առաջնային տվյալներ: Այս համակցված տվյալների համաձայն, տարածաշրջանում հողային ռեսուրսները զբաղեցնում են Աղյուսակ 22-ում ներկայացված տարածքները: Որպեսզի տեսնենք քաղաքային և գյուղական հողերի տարբերությունը, ստորև ներկայացված են նաև Միսիան քաղաքի հողերը:

Գծապատկեր 11. Գյուղատնտեսական նշանակության հողերը Մյունիքի մարզում, հա, 2016 թ.




Աղյուսակ 23. Հողերի բաշխումը Միսիանում և պիլոտային համայնքներում ըստ օգտագործման և տեսակների, հա, 2015թ.

Համայնքներ	Գյուղատնտեսական նշանակության հողեր, հա	Բնակավայրերի հողեր	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, հա	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր, հա	Հատուկ պահպանման հողեր, հա	Հատուկ նշանակության հողեր, հա	Անտառային հողեր, հա	Ջրային հողեր, հա	Ընդամենը
ք. Միսիան	1,786.0	706.0	50.0	18.0	94.0	33.0	598.0	36.0	3,321
Գորայք բնակ.	20,716.0	68.0	97.0	34.0	8.0	0.0	0.0	0.0	20,923 ⁹
Ծղուկ բնակ.	9,692.0	53.0	26.0	6.0	1.0	13.0	143.0	480.0	10,414
Մառնակունք բնակ.	11,649.0	88.0	24.0	45.0	76.0	0.0	137.0	32.0	12,051
Սպանդարյան բնակ.	4,663.0	67.0	11.0	6.0	11.0		139.0	48.0	4,945
Բռնակոթ	6,781.0	276.0	23.0	3.0	9.0	0.0	166.0	22.0	7,280
Թասիկ	3,862.0	60.0	3.0	3.0	37.0	0.0	58.0	29.0	4,052
Շաքի	7,165.0	84.0	59.0	16.0	4.0	1.0	53.0	18.0	7,400
Տոլորս	2,408.0	34.0	4.0	23.0	1.0	0.0	204.0	185.0	2,859
Սալվարդ	4,065.0	72.0	90.0	0.0	1.0	0.0	0.0	25.0	4,253
Աշոտավան	899.0	52.0	10.0	1.0	10.0	0.0	94.0	163.0	1,229
Նորավան	4,038.0	61.0	26.0	8.0	3.0	7.0	0.0	1.0	4,144
Նժդեհ	5,455.0	43.0	5.0	1.0	0.0	0.0	0.0	17.0	5,521
Ընդամենը	83,179.0	1,664.0	428.0	164.0	255.0	54.0	1,592.0	1,056.0	88,392

⁹ Մյունիքի մարզի պաշտոնական կայքէջում Գորայք հողերի ընդհանուր մակերեսը դիտարկվում է 21.685 հա, սակայն համայնքը տարածքի հողերի հանրագումարն ըստ էության, աղյուսակում այդ ցուցանիշը 20,923 է: Քանի որ համայնքապետարանում չկարողացավ կատարել համայնքի տարածքի անհնար էր վերստուգել այս տվյալները, և հողատեսակների փաստացի հանրագումարը համայնքում հանդիսացավ աղյուսակում բերված թիվը:

Վերոնշյալ գյուղատնտեսական նշանակության հողերից յուրաքանչյուրն ունի իր առանձին բնութագիրը, և դրանք բաշխվում են ըստ հողի ենթատեսակների: Ստորև ներկայացված գծապատկերը ցույց է տալիս Միսիան քաղաքի և պիլոտային համայնքների գյուղատնտեսական հողերի տեսակներն ընդհանրապես:

Գծապատկեր 12. Գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակարար կշիռը Միսիան քաղաքում և պիլոտային համայնքներում, հա, %, 2016 թ.-ի դրությամբ




4.2 Բուսականությունը տարածաշրջանում՝ կախված դրանց տեսակներից և օգտագործման ազդեցություններից (ներառյալ լուսանկարները)

Բուսականությունը Սյունիքի տափաստաններից (հացահատիկային տափաստաններով տրագականտային բույսերով և մարգագետնային տափաստաններով), ալպիական բուսականությունից (ցածր ալպիական մարգագետիններով տրագականտային գազ համալիրով, ալպիական մարգագետիններով, գորգերով և հաստ տորֆի ձևավորման համալիրով), վրացական և արևելյան կաղնու ու բոխու անտառներից, նոսր անտառներից (փշատերև և սաղարթախիտ, որոշ տեղերում՝ Արաքսի կաղնով):

Միսիանի տարածաշրջանը հիմնականում ծածկված է հացահատիկային և տարբեր խոտածածկ-հացահատիկային տափաստաններով տրագականտային բույսերով և մարգագետնային տափաստաններով:

Կարևոր է տարբերել հատկապես գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է գյուղատնտեսական հողերի բաշխումն ըստ իրենց բերքատվության և արտադրանքի:

մարզում հիմնականում բաղկացած է և տարբեր խոտածածկ-հացահատիկային



Նկար 5 ՀՀ բազմապիսի բուսականության և բնակավայրերի բաշխումն ըստ տեսակների

Աղյուսակ 24. Հողօգտագործման տեսակներն ըստ գյուղատնտեսական արտադրանքի, Սյունիքի մարզ, 2015թ.

	Վարելահող,		Միջին		Համախառն բերքը,		Սյունիքի մասնաբաժինը ՀՀ	
	Սյունիքի մարզ	ՀՀ	Սյունիքի մարզ	ՀՀ	Սյունիքի մարզ	ՀՀ	Սյունիքի մարզ	համախառն բերքում, %, 2015
Եզիպտացորեն և հասիկաբնդեղենայ ին մշակաբույսեր	25,703.0	201,254.0	26.3	31.8	67.6	637.9	10.6%	100.0%
Կարտոֆիլ	1,747.0	33,306.0	189.4	228.9	33.1	764.5	4.3%	100.0%
Բանջարեղենային բույսեր	1,083.0	29,078.0	167.4	334.7	18.1	1,031.5	1.8%	100.0%
Տնկարկներ	-	6,782.0	-	423.4	-	286.8	0.0%	100.0%
Մրգերի և հատապտուղների տնկարկներ	2558.0	40,582.0	62	105	15	387	4%	100.0%
Խաղող	185.0	17,296.0	65	188	1	309	0%	100.0%

4.3 Ոլորտում նշանակալի փոփոխությունները

Արոտավայրերի և անտառային տարածքների չկարգավորված օգտագործումը հանգեցնում է էրոզիայի, դեգրադացիայի, անապատացման և կենսաբազմազանության կորստի Հարավային Կովկասի բարձր լեռնային շրջաններում (առանցքային հիմնախնդիր):

Տեղի բնակիչներն, ովքեր օգտագործում են համայնքային նշանակության հողերի բնական ռեսուրսները, համարվում են հիմնական թիրախային խումբ: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի անասնաբուծությամբ զբաղվողներին և հովիվներին, աղքատ մանր սեփականատերերին և կանանց:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպությունը (ՌԶԳ ՀԿ) 2013 թ.-ից սկսել է համագործակցել GIZ-ի հետ՝ «Անասնապահության զարգացումը Սյունիքի մարզում» (ՌԶԳ ՀԿ) և «Կենսաբազմազանության կայուն կառավարում Հարավային Կովկասում» (GIZ) ծրագրերի շրջանակներում:

Այս ծրագրի առանցքային նպատակն արոտավայրերի մոնիտորինգի կազմակերպման և անցկացման նպատակով մշակված նոր մոդելի զարգացումն և կիրառումն էր՝ ուղղված Հայաստանի համայնքներում արոտավայրերի կառավարման բարելավմանը, ինչպես նաև՝ աջակցելու համար Հայաստանի կառավարությանը՝ արոտավայրերի կառավարման պլանավորումն ու կիրառվող մեթոդները բարելավելու համար: Մոդելը փորձարկվեց Սիսիանի տարածաշրջանի գյուղական համայնքների 24 արոտավայրերում (այդ թվում՝ բոլոր պիլոտային համայնքներում):

Իրականացման հաջող արդյունքները կերաշխավորեն մոնիտորինգի նոր մոդելի ներդրումը Հայաստանի այլ մարզերում ևս՝ ուղղված արոտավայրերի կառավարման պլանավորման, իրականացման մեթոդների բարելավմանը, պետք է ուղղված լինի ոչ միայն անասնաբուծության ոլորտում կերարտադրության հետ կապված խնդիրների վերացմանը, այլև առավել կարևոր հարցերի լուծմանը, ինչպիսիք են՝ խոցելի ռիսկերի կրճատման կարգավորումը, ռիսկերից պաշտպանվածությունը և կենսաբազմազանության կայուն կառավարումը:

Կարևոր է նշել այն, որ ծրագրի ազդեցությունն արդեն իսկ ակնհայտորեն նկատելի է 7 պիլոտային համայնքներում, այդ թվում՝ Գորայք համայնքի Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերում: Այս համայնքները կիրառում են վերոնշյալ մոդելը՝ շարունակելով իրենց դաշտային գործունեությունը:

4.4 Գոյություն ունեցող օրենքները և իրավական կարգավորումները. ուժեղ և թույլ կողմերը, լրացման ենթակա շոշափելի բացթողումներ

ՀՀ հողային օրենսդրությունն ընդունվել է 2001 թվականի մայիսին և գործում է մինչ օրս՝ մի քանի բարելավումներով և փոփոխություններով: Ավելի ուշ՝ 2008 թ. ապրիլին, ընդունվել է «Հողերի օգտագործման վերահսկողության և պահպանման մասին» ՀՀ օրենքը, որը կիրառվում է նաև այսօր:

Գոյություն ունի «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը, որը գործում է 1994 թ.-ից՝ ուղղված հողատերերի և պետական սեփականություն հանդիսացող հողերի մշտական և ժամանակավոր օգտագործողների իրավունքների կարգավորմանը:

Հարկերի դրույքաչափերը կախված չեն հողի օգտագործումից ստացված եկամտից, դրանք հիմնականում կախված են հողերի տեղակայման տեսակներից, գտնվելու վայրից և նշանակությունից: Հողերը հիմնականում պատկանում են համայնքապետարաններին և կառավարվում են նրանց կողմից: Անտառները պատկանում են պետությանը և կառավարվում են Հայաստանի ՊՈԱԿ-ի կողմից:

Հայաստանի կառավարության կողմից ընդունված հրամանագրերն արոտավայրերի կայուն կառավարման վերաբերյալ (թվագրված՝ 28.10.2010, No1477-Ն և 14.04.2011՝ No389-Ն), սահմանում են արոտավայրերի և խոտհարքների կիրառման կարգը Հայաստանում: Վերջինս հիմնականում մշակվել է բազմամյա միջին տվյալների ուսումնասիրությունների և վերլուծությունների, ինչպես նաև՝ մասնակի մոնիտորինգի արդյունքների հիման վրա: Հարկ ենք համարում նշել, որ ոչ միշտ է, երբ ՀՀ կառավարության վերոնշյալ հրամանագրերով վերոնշյալ ընթացակարգերը կարող են արդարացված լինել՝ մեկ պարզ պատճառով՝ տարբեր բնական գոտիների արոտավայրերի իրավիճակը և դեգրադացիոն աստիճանը երբեք հստակ չեն ճշգրտվել, գրանցվել և բացատրվել նախկինում: Արոտավայրերի վիճակի գնահատումը՝ մոնիտորինգը, այն գործընթացներից մեկն է, որը պահանջվում է արոտավայրերի կայուն կառավարման երաշխիքների և հնարավորությունների ապահովման համար:

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թ. դեկտեմբերի 19-ի N 1465 որոշման՝ ստեղծվել է Սյունիքի մարզի «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը՝ «Շիկահող» պետական արգելավայր ՊՈԱԿ-ի և «Արեվիք» ազգային պարկ ՊՈԱԿ-ի միավորման արդյունքում: Ներկայումս կազմակերպությունն իրականացնում է պահպանության աշխատանքներ բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ զբաղեցնելով ընդհանուր առմամբ 79,660.5 հա տարածք և ներառելով իր մեջ հետևյալ 7 տեղամասերը՝

- «Շիկահող պետական արգելոց»՝ 12,137 հա,
- «Զանգեզուր պետական արգելավայր»՝ 25,870.64 հա,
- «Արեվիք ազգային պարկ»՝ 3,0353.8 հա,
- «Սոսու պուրակ» պետական արգելավայր՝ 64,2 հա,
- «Խուստուփի պետական արգելավայր»՝ 6,946.7 հա,
- «Բողաքար պետական արգելավայր»՝ 4,048 հա,
- «Սև լիճ պետական արգելավայր»՝ 240.1 հա:

Ինչ վերաբերում է Սյունիքի մարզում ջրային ոլորտի իրավական կարգավորմանը, ապա հարկ է նշել, որ ՀՀ Ջրային օրենսգիրքն ընդունվեց 2002 թ. հունիսին, որի համաձայն բոլոր ազգային ջրային պաշարները և ռեսուրսները գտնվում են ջրային կառավարման պետական մարմինների, ջրօգտագործողների պալատի և ջրօգտագործողների միությունների կայուն վերահսկողության տակ: Բացի այդ, առկա է ջրի ազգային հատուկ քաղաքականություն և ազգային հատուկ ռազմավարություն՝ ուղղված ամբողջ երկրում ջրի օգտագործմանը և մատակարարմանը:

Ջրային ռեսուրսները, ինչպիսիք են ջրամբարները, գետերը և վտակները ենթադրվում է, որ պետք է շահագործվեն սույն օրենսգրքի համաձայն, սակայն, այնուամենայնիվ, այս ոլորտում դժվար է խուսափել խախտումներից և տարաձայնություններից: Այսպիսով, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում իրականացվող միջազգային ծրագրերը նպատակ ունեն քիչ թե շատ բարելավել ոլորտում տիրող ներկա իրավիճակը (օրինակ Սսիական զարգացման բանկի կողմից «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ֆինանսավորումը և աջակցությունը):

5. ԴԻԼՈՏԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԴԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁ

5.1 Բնական պաշարների քարտեզագրում, ինչպես օրինակ՝ բնական անտառների, արոտավայրերի, ջրային պաշարների քարտեզագրում. ընդհանուր նկարագիրը և վտանգները

Անտառներ: Սյունիքի մարզում անտառները զբաղեցնում են մարզի զգալի տարածքը, որոնցից հատկապես պետք է նշել Մթնածորը և սոսու հազվագյուտ բնական անտառը: Անտառները հարուստ են եզակի բույսերով և կենդանիներով:

Անտառային հողերի և անտառների կայուն կառավարումն իրականացվում է անտառային կառավարման պլանի միջոցով: Անտառային կառավարման պլանը տեխնիկական փաստաթուղթ է, որը մշակվել է անտառատնտեսական գործընթացների արդյունքում և հաստատվել անտառային արդյունավետ կառավարման իրականացման համար, որն ամբողջությամբ նկարագրում է անտառային կառավարման և անտառօգտագործման բազմակողմանի զարգացումը նախորդ ժամանակահատվածի ընթացքում և սահմանում անտառային կառավարման գործընթացներն առաջիկա 10 տարիների համար: Անտառային կառավարման պլանի նպատակն անտառային պաշարների կայուն և անխափան օգտագործումն է՝ համաձայն ազգային անտառային քաղաքականության և Ազգային անտառային ծրագրով սահմանված դրույթների:

Միսիանի անտառտնտեսության տարածքում անտառային շինարարության առաջին գործընթացները մեկնարկել են դեռևս 1958 թ. Գորիսի անտառային տնտեսության Համալիրում Անդրկովկասյան անտառային շինարարական ձեռնարկության կողմից՝ 2710 հա մակերեսով անտառային հատվածի վրա: Հետագայում անտառային շինարարական աշխատանքներն իրականացվել են 1968 թ., 1978 թ., իսկ վերջինը՝ 1989 թ.-ին:

2008 թ. նոյեմբերի 10-ին Տավուշի մարզի «Սևադա և քույրեր» ՍՊԸ-ի և «Հայաստանի պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև կնքվեց ծառայությունների գնման պայմանագիր՝ Միսիանի անտառային տնտեսության տարածքում գտնվող անտառների գույքագրման և գնահատման, ինչպես նաև՝ անտառկառավարման պլանի զարգացման նպատակով: Այս աշխատանքներն իրականացվել են ՀՀ անտառային օրենսդրության և ՀՀ անտառներում անտառային շինարարության և կառավարման ծրագրերի զարգացման մասին հրահանգի համաձայն:

Անտառային շինարարական ընթացակարգերի համաձայն՝ 1989թ. անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 4,737 հա էր, որն իր մեջ ներառում էր Շաղատի և Միսիանի անտառային տնտեսությունները՝ համապատասխանաբար 2,435 հա և 2,302 հա: Այնուամենայնիվ, ընթացիկ անտառային շինարարությանը համահունչ, անտառտնտեսությունը ներկայումս ամբողջությամբ զբաղեցնում է 5,420 հա տարածություն՝ ընդգրկելով նաև նախկին կոլեկտիվ և պետական գյուղացիական տնտեսությունները (ներկայումս ընդգրկելով Շաղաթի անտառային տնտեսությունը՝ 2,627 հա (48,4%) և Միսիանի անտառային տնտեսությունը՝ 2,793 հա (51,6 %) տարածքներով):

Տարածաշրջանում կարելի է տեսնել ՀՀ անտառներին բնորոշ մի շարք ծառատեսակներ: Բնական և արհեստական ծառերը զբաղեցնում են անտառների տարածքի մեծ մասը: Շատ կաղնու անտառներ 5-րդ բոնիտետից մեկն են: Տարածաշրջանում կլիմայական պայմանները բավականին նպաստավոր են սոճու, թխկիի, սկացիայի, հացենու, կնձնիի աճեցման համար: Սակայն, անտառտնտեսության անտառային կառավարման պլանի


անտառային-
մշակույթը
դանդաղ են
աճում՝
պայմանավորված քիչ տեղումներով և չոր ու աղքատ հողով:

Չնայած անտառների փոքրությանը՝ այս անտառներին բնորոշ են որոշ վայրի կենդանիներ, ինչպիսիք են՝ արջը, գայլը, աղվեսը,

նապաստակը, քարայծր և մարտենին: Մուֆլոնը և վայրի խոզը կարող են երբեմն հանդիպել այստեղ: Կան բավականին շատ թռչուններ: Որոտանը և իր վտակները հարուստ են ձկնատեսակով:


Միսիանի անտառտնտեսության գրասենյակը գտնվում է Սյունիքի մարզում՝ Միսիան քաղաքում:

Անտառտնտեսության գրեթե ամբողջ տարածքում նկատվում է էրոզիայի տարբեր մակարդակներ, որոնց կանխարգելման համար էական նշանակություն ունեն անտառային ծառատունկերը:



Նկար 6 Միսիանի տարածաշրջանի քարտեզ: Անտառտնտեսությունը ըստ պետական անտառների և ենթաձյուղերի

Գծապատկեր 13. Անտառածածկ մակերևույթների և պահուստների բաշխումն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության, %




Արոտավայրեր: Հայաստանի արոտավայրերը հանդիսանում են անասնաբուծության համար ամենակարևոր բնական պաշարները և հատկապես արժևորվում են ընդհանուր կենսաբազմազանության տեսանկյունից: Այս սպառվող պաշարների անկանոն և ինքնաբուխ օգտագործումը հանգեցնում է մեծ թվով էկոլոգիական խնդիրների առաջացմանը, որոնք համալիր կերպով ազդում են նաև տարածաշրջանի տնտեսության մակարդակի վրա, մասնավորապես՝ անասունների մթերատվության, արդյունքում՝ գյուղատնտեսության մեջ բերքատվության, հետևաբար նաև ոլորտում ձևավորվող գների, բնակչության կողմից սպառվող մթերքի որակի վրա, և ինչն ավելի սարսափելի է, առկա է բավականին մեծ վտանգ, որ կնվազի ապագա սերնդի համար ցանկացած պոտենցիալ ռեսուրս կառավարելու հնարավորությունը կամ նույնիսկ մոտ ապագայում դրանց վերացումը:

Նույն խնդիրն առկա է թե՛ Սյունիքի մարզում, թե՛ Սիսիանի տարածաշրջանում և մեծ կարևորություն ունի ամբողջ Հայաստանի համար:

Որպեսզի ներկայացնենք տիրող իրավիճակի ավելի կոնկրետ պատկերը, օգտագործելով արոտավայրերի վերաբերյալ առկա և վերստուգված տվյալներն ըստ մարզերի և համայնքների, մենք կկենտրոնանանք պիլոտային համայնքների վրա: Այստեղ արոտավայրերի ընդհանուր մակերեսը կազմում է 48.344 հա: Ստորև ներկայացված գծապատկերը ցույց է տալիս արոտավայրերի բաշխումն ըստ համայնքների և բնակավայրերի:

Փծապատկեր 14. Արոտավայրերի բաշխումն ըստ Միսիանի տարածաշրջանի պիլոտային համայնքների, հա և %, 2016 թ.-ի դրությամբ




Ակնհայտ է, որ Գորայք համայնքն իր Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերով, պիլոտային տարածաշրջանում արոտավայրերի ռեսուրսների հետ կապված ունի ամենամեծ մասնաբաժինը (միասին՝ 61%):

Արոտավայրերի վիճակի հետագա վատթարացման ռիսկերը նվազեցնելու և ապագայում դրանց պոտենցիալ օգտագործման հնարավորություններն ընդլայնելու համար 2013 թ.-ից սկսած հսկայական ու շոշափելի միջամտություններ են իրականացվում միջազգային GIZ և տեղական Ռազմավարական զարգացման գործակալություն ՆԿ-ի կողմից: Միասին համագործակցելով՝ նրանք ստեղծել են արոտավայրերի արդյունավետ օգտագործման մոդել՝ ընդհանուր նպատակին հասնելու համար այդ գործընթացում ընդգրկելով նաև տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ, այս պլանների վերաբերյալ մասնագիտական ուղեցույցներ, ինչպես նաև յուրաքանչյուր համայնքի գծով ստեղծվել են հատուկ սխեմատիկ քարտեզներ և տպագրվել են: Այս քարտեզներից մի նմուշ ներկայացված է Նկար 7-ում:

Ջրային ռեսուրսներ Մյունիքի մարզը հարուստ է նաև ջրառատ գետերով, որոնցից են Որոտանն ու Ողջին: Միսիանի անտառտնտեսությունը գտնվում է Որոտան գետի միջին հոսանքի ավազանում:

Որոտան գետը սկիզբ է առնում Ղարաբաղյան բարձրավանդակի արևմտյան մասից և համարվում է Արաքս գետի ձախ վտակը: Այն սնվում է տարբեր աղբյուրներից (ստորգետնյա ջրերի 50 %). Որոտանի վտակներից են Արագիջուրը, Միսիանը, Շաղատը, Այրին, Շաքին և Լորաձորը: Դրանք բոլորը լեռնային ջրեր են, ունեն V- աձև գետահովիտներ, արագահոս են, ունեն բազմաթիվ սողանքներ և ձևավորում են ջրվեժներ (առավել հայտնի է Շաքիի ջրվեժը):



Նկար 7 Բռնակոթի արոտավայրերի կառավարման քարտեզը.

Որոտանի երկարությունը 178 կմ է, ջրային ավազանը կազմում է 5650 կմ². Այն ունի անկանոն ռեժիմ, վարարում է զարնանն ու վաղ ամռանը (համարյա 60 %-ով).

Ձմռանը գետի վերին հոսանքում նկատվում են սառցակալման երևույթներ, և նույնիսկ որոշ հատվածներում՝ սառույցներ:

Անգեղակոթի, Տոլորսի, Շամբի և Սպանդարյանի ջրամբարների վրա կառուցվել են Որոտանի և Տաթևի, Շամբի և Սպանդարյան ՀԷԿ-երը և գործում են դրանց վրա:

Որոտանի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման նպատակներով: Որոտանի վերին հոսանքների ջրերի մեծ մասը թափվում են դեպի Արփա, այնուհետև՝ Սևան:

Կան նաև բազմաթիվ փոքր լճեր (Որոտանի և Միսիանի լեռնաշղթաների / լեռնանցքների միջև), սառնորակ աղբյուրներ, ինչպիսիք են՝ Շաքին, Զորգորը, Անգեղակոթը, Սառնակունքը, Լուսակերտը և այլն, և Միսիանի, Որոտանի, Բալաքի և այլն հանքային ջրերը:

5.2 Վերոնշյալ ռեսուրսների հետ կապված փորձը և զարգացման միտումները. լավագույն փորձ, սովորություններ և բարելավման ապացուցված անհրաժեշտությունը

Մյունիքն իր բնական հարստությամբ և օգտակար հանածոներով ամենահարուստ մարզերից մեկն է. օգտակար հանածոները հիմնականում արդյունահանվում են այստեղ: Դրանցից կարևորագույններն են՝ մոտ 17 գունավոր հանքաքարերը, ինչպիսիք են՝ պղինձը, մոլիբդենը, ցինկը և այլն, և թանկարժեք մետաղները, ինչպիսիք են՝ ոսկին և արծաթը, ինչպես նաև ոչ-մետաղական օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

2015թ. պետական վիճակագրական տվյալների համաձայն, անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետվող վտանգավոր նյութերի քանակը մեկ շնչի հաշվով կազմում է 63.5

կգ, իսկ ՀՀ միջին ցուցանիշը 42,9 կգ է: Այս ցուցանիշով Սյունիքի մարզը 4-րդ տեղում է՝ Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերից հետո (համապատասխանաբար 206.9 կգ, 157.5 կգ, 96,9 կգ): Շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական ռեսուրսների օգտագործման վճարը մեկ շնչի հաշվով տարածաշրջանում կազմում է 728.7 դրամ, ինչը գրեթե 1.4 անգամ ավելի ցածր է ՀՀ միջին ցուցանիշից (1005,7 դրամ):

Ինչ վերաբերում է տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության 7 բնական պաշարների օգտագործման վճարներին մեկ կազմակերպության հաշվով, այստեղ Սյունիքի մարզի մասնաբաժինը բավականին զգալի է և կազմում է 1273.3 դրամ՝ մինչդեռ ՀՀ միջինը 773,8 դրամ է մեկ կազմակերպության հաշվով: Այստեղ Սյունիքի մարզը զբաղեցնում է 4-րդ տեղը՝ Արարատի, Վայոց Ձորի և Արմավիրի մարզերից հետո:

Միանգամայն ուրախալի է այն, որ տարածաշրջանում բնապահպանական օրենսդրության բացահայտված իրավախախտումների վճարների մասով Սյունիքի մարզն ունի ամենացածր ցուցանիշները՝ 10.7 միավոր յուր. 100 հազ. մարդու հաշվով, ինչը շատ ցածր է ՀՀ միջին ցուցանիշից (29.0):

Ինչ վերաբերում է հողի օգտագործմանը կամ արոտավայրերի օգտագործմանը, ապա, հիմնվելով համայնքի ղեկավարների և պատասխանատու մասնագետների հետ անմիջական հարցազրույցների վրա՝ կարող ենք ասել, որ գյուղական բնակչության շրջանում չկան հատուկ սովորություններ կամ կանոններ: Նրանք սովոր են կիրառել անկանոն և չկազմակերպված մոտեցումներ արածեցման, ոռոգման կամ բնական պաշարների հետ կապված այլ գործունեություն իրականացնելիս: Միայն վերջին 3 տարիների ընթացքում Սիսիանի տարածաշրջանի առնվազն 19 համայնքներում մշակվել են հատուկ մեխանիզմներ և մոդելներ: Շնորհիվ գործունեության բարձրացմանն ուղղված ինտենսիվ իրազեկման, համապատասխան գործիքների և բարձր տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև ոլորտում լավագույն փորձագետների կողմից ուղղորդումը որոշակիորեն բարելավում է ստեղծված իրավիճակը, և սա կարող է լավ օրինակ ծառայել Հայաստանի մնացած գյուղական համայնքների համար:

Ոլորտային կանոնակարգումները և բարեփոխումները, ինչպես արդեն նշել ենք, իրականացվում է հատուկ Հայանտառ կոչվող ՊՈԱԿ-ի կողմից, որը գործում է ՀՀ ամբողջ տարածքում բոլոր մարզերում և տարածաշրջաններում իր «մասնաճյուղերի» օգնությամբ: Նրանք կոչվում են տարածաշրջանային Անտառտնտեսություններ: Օրինակ, Սյունիքի մարզում նրանք ունեն Կապանի անտառտնտեսությունը, Սյունիքի անտառտնտեսությունը և Սիսիանի անտառտնտեսությունը՝ իրենց շրջապատող համապատասխան անտառային գոտում:

Քանի որ արդեն մանրամասն դիտարկել ենք Սյունիքի անտառտնտեսության բնութագրիչ հատկանիշներն ու ենթաճյուղերը, ստորև կներկայացնենք նաև Սիսիանի անտառտնտեսության կապի միջոցները.

<<Սիսիանի անտառտնտեսություն>> Հողերն ըստ մասնաճյուղերի
Հասցե՝ Սյունիքի մարզ, ք: Սիսիան
Հեռ՝ 0-2830 65 00
Տնօրեն՝ Արկաղի Արշակյան

2005 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունվել է ոլորտը կարգավորող ՀՀ անտառային օրենսգիրքը:

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2011 - 2016 ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԿԱՄ / ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՆՏՐՎԱԾ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐԸ

6.1 Օժանդակող կազմակերպությունների կողմից իրականացվող/ֆինանսավորվող ծրագրերի համառոտ նկարագիրը. նպատակային ոլորտները և ընթացիկ կարգավիճակը (ավարտված կամ ընթացիկ)

Լինելով սոցիալական և տնտեսական բարգավաճման և զարգացման համար հսկայական ներուժ ունեցող մարզերից մեկը՝ Սյունիքի մարզը շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում և համարվում է թիրախային բազմաթիվ ազգային և միջազգային կազմակերպությունների համար: Սոցիալ-տնտեսական դաշտի բարելավման համար և առաջնահերթ հիմնախնդիրների լուծման նպատակով մոտավորապես 26,71 մլրդ դրամի ներդրումային, հումանիտար և վարկային ծրագրեր են իրականացվել տարածաշրջանում տեղական և միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջոցով՝ ընդգրկելով տարածաշրջանի գրեթե բոլոր համայնքները:

Աղյուսակ 25. Միջազգային և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ներդրումները Սյունիքի մարզում 2015թ. -ին, հազ. դրամ


	Կազմակերպություն	Զարգացման ծրագրեր	Մարդասիրական օգնություն	Վարկային ծրագրեր	Ընդամենը, հազ. դրամ
1	«Զանգեզուր» պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ	2,468,362			2,468,362
2	«Ազարակ» պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ	1,000,000	49,177		1,049,177
3	«Դանդի Փրիշու մեթալս Կապան» ՓԲԸ	4,458,720	54,322		4,513,042
4	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը Հայաստանում	230,000			230,000
5	Վորլդ Վիժն Հայաստան	4,217	108,484		112,702
6	«Պետական կառավարման և վարչարարության գրասենյակ» ՓԲԸ	263,465			263,465

7	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	48,390	48,390
8	ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ	43,285	43,285
9	«Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՀ առողջապահության նախարարության պետական գործակալություն	1,910,131	1,910,131
10	«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի վերլուծության և կառավարման գործակալություն	88,588	88,588
11	Արդշինքանկը ՓԲԸ	2,873,500	2,873,500
12	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ)	243,100	243,100
13	Յունիքանկ ՓԲԸ	56,000	56,000
14	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ՓԲԸ	3,400,000	3,400,000
15	ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ	408,000	408,000
16	Հայֆիզնեսբանկ ՓԲԸ	734,600	734,600
17	Կոնվերս ՓԲԸ	301,100	301,100
18	Նոր հորիզոն ունիվերսալ վարկային կազմակերպությունը (ՈՒՎԿ)	188,000	188,000
19	ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ	792,000	792,000
20	Արեգակ ՈՒՎԿ	1,218,000	1,218,000
21	Ֆինքա ՈՒՎԿ	1,492,800	1,492,800
22	Արագ-Կրեդիտ ՈՒՎԿ	82,800	82,800
23	«Հորվարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական ՀԿ	26,800	26,800
24	Հույսի կամուրջ սոցիալական բարեգործական ՀԿ	4,801	4,801
25	Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն,	100,000	100,000

	(CARD) հիմնադրամ				
26	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	322,655			322,655
27	Ասիական զարգացման բանկ	722,382			722,382
28	Համաշխարհային բանկ	3,012,027			3,012,027
	Ընդամենը	14,677,023	238,783	11,789,900	26,705,706


Վերը նշված տվյալների համաձայն՝ հատկանշական է տարածաշրջանում զարգացման, հումանիտար և վարկային ներդրումների բաշխման դիտարկումը 2015 թ.-ին:

Գծապատկեր 15. Ներդրումների բաշխումը Սյունիքի մարզում, %, 2015թ.



Հետաքրքրական է նաև դիտարկել, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել ներդրումների տեսակների մասով՝ 2014 թ - 2015 թ. դինամիկ վերլուծության արդյունքում: Ստորև ներկայացված նկարում ակնհայտ երևում է, որ մի կողմից կտրուկ աճել է զարգացման ներդրումային ծրագրերի թիվը, և, մյուս կողմից, էապես նվազել են վարկային ներդրումային ծրագրերը: Սա ողջունելի փաստ է, որն ապացուցում է, որ հեռավոր մարզերում և համայնքներում գտնվող բնակչությունը գնալով ավելի մեծ աջակցություն է ստացել իր սոցիալ-տնտեսական կյանքի բարելավման համար, միաժամանակ նվազել են նրանց պարտքերը, որի արդյունքում նրանք առավել ինտենսիվորեն մոտիվացվել են քիչ խոչընդոտներով զարգացնելու իրենց տնտեսությունները:

Գծապատկեր 16. Ներդրումներն ըստ աղբյուրների և ուղղությունների, մլրդ. դրամ, Սյունիքի մարզ, 2014-2015 թթ.



Բոլոր վերը նշված ծրագրերը վերաբերում են ողջ Սյունիքի մարզին: Ինչ վերաբերում է Սիսիանի տարածաշրջանին և պիլոտային համայնքներին, համայնքապետարանները մատնանշեցին մի քանի էական ծրագրեր:

Աղյուսակ 26. Մեծածավալ ծրագրերը՝ իրականացնող կազմակերպությունների կողմից, 2015թ

Ծրագիր	Իրականացնող	Արդյունա վետ ժամանա կաշրջան	Հղումներ
<i>Արոտավայրերի կառավարման պիլոտային պլան Սիսիանի տարածաշրջանի ընտրված համայնքներում՝ հիմնված ՀՀ արոտավայրերի մոնիտորինգի ձեռնարկի վրա, թիրախը՝ Սիսիանի 24 համայնքներ</i>	Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ	2013 – մինչ օրս	
<i>Սիսիանի տարածքային զարգացման ծրագրի, այդ թվում՝ առողջապահության, կրթության, տնտեսական</i>	Վորլդ Վիժն Հայաստան	2004 – մինչ օրս	http://www.wvarmenia.am/en/adp/show/4

<i>զարգացման, քաղաքացիական հասարակության ծրագրեր:</i>			
<i>Աջակցություն 29 համայնքներում սոցիալական ոլորտի բարեփոխումների ծրագրին</i>	Քաունթերփարթ ինթերնեշլ	2014 - 2019	http://www.counterpart.org/support-to-social-sector-reforms/
<i>Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (ՀԳՆԿՄ) նախագծեր (I և II)</i>	«Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԳԾԻԳ) պետական գործակալություն	2010 - 2020	http://www.arspiu.com/CAR/MAC.17.0.html?&L=0
<i>Անասնաբուժական ծառայությունների բարելավում, վերապատրաստման աշխատանքներ և ՄԿՈԻ. Կետեր:</i>	CARD հիմնադրամ	2010 - 2012	http://card.am/

6.2 Լավագույն և վատագույն փորձերը. հաջողված պատմություններ և քաղված դասեր

Համայնքների ղեկավարների հետ առաջնային հարցազրույցների ժամանակ քննարկվել և բացահայտվել են պիլոտային համայնքներում իրականացված միջանկյալ ծրագրերի արդյունքում արձանագրված հաջողություններն ու ձախողումները:

Որքան էլ տարօրինակ է, կան համայնքներ, որտեղ պատասխանատու աշխատակիցները կամ համայնքի ղեկավարները վարանում են վերհիշել որևէ զարգացման կամ աջակցման ծրագիր կամ կազմակերպության, թեև երկրորդական աղբյուրների տվյալները և ոլորտի մասնագետների կողմից արված հայտարարությունները վկայում են պիլոտային համայնքներում գործող տասնյակ նախագծերի մասին:

Այս ոլորտում աշխատող փորձագետների կարծիքների համաձայն՝ մարդիկ հակված են թաքցնել կամ ավելի քիչ ուշադրություն դարձնել կատարված միջամտություններին՝ ակնկալելով ավելի շատ աջակցություն՝ ուղղված իրենց համայնքներին՝ այլ ծրագրերի և կազմակերպությունների միջոցով:

Այսպիսով, համայնքապետարանների ներկայացուցիչների հետ առաջնային հարցազրույցների հիման վրա, ծրագրային միջամտությունների դրական կամ բացասական արդյունքներն ըստ համայնքների կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝

ծրագրերը, ուղղակի հարցազրույցներ, 2011 – 2016 թթ.

	Հաջողություն	Ձախողում
ԳՈՐԱՅՔ	<p>2012-2013, ՌԶԳ ՀԿ` Արոտավայրերի արդյունավետ կառավարման ծրագրի շրջանակներում հիմնադրվել է կոոպերատիվ, ստեղծվել է թիմ` ծրագրի իրականացման և վերահսկման համար: Գյուղատնտեսական սարքավորումներ և համակարգիչ են տրամադրվել համայնքին նախագծի շրջանակներում:</p> <p>2012` 4 ջրի միավորների ստեղծում, համայնքի բյուջեի ֆինանսավորման արդյունքում, որից 1-ը` հեռավոր արոտավայրերում, իսկ 3-ը` համայնքում</p>	<p>Կորպորատիվ կողմից համայնքին տրամադրված / նվիրաբերված համակարգիչը ետ է վերադարձվել` ստեղծկատվությունը համակարգ մուտք չանելու պատճառով:</p>
ՇՂՈՒԿ	<p>2013, ՀԳՌԿՄ, ԳԾԻԳ` Ծրագիրը` ուղղված կենդանիների բուժմանն ու արոտավայրերի օգտագործմանը: 3 ջրի կետերի կառուցում, որից 2-ը համայնքից 3 կմ և 3-րդ մեկը 9 կմ հեռավորության վրա: Գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների տրամադրում:</p> <p>Սոցիալական ներդրումների հիմնադրամ և ԳԾԻԳ` համայնքի դպրոցի վերակառուցում</p>	
ՄԱՌՆԱԿՈՒՆՔ	<p>Վորլդ Վիժն Հայաստան, 2009` մշակույթի տան վերակառուցում և վերազինում</p>	
ՄՊԱՆԴԱՐՅԱՆ	<p>ՀԳՌԿՄ, ԳԾԻԳ` Արոտավայրերում ջրային միավորների կառուցում, որի շնորհիվ կենդանիների եկամտաբերությունն աճել է, և զգալիորեն բարելավվել է կենդանիների հիգիենիկ բնութագիրը:</p>	
ԲՈՆԱԿՈԹ	<p>2014 - 2015, Գյուղատնտեսական ծրագրերի իրականացում` հեռավոր արոտավայրերում 4 ջրի կետերի (միավոր) հիմնադրում</p> <p>2016 թ., ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը` Ծառատունկ կանցկացվի, և նոր այգի կստեղծվի:</p> <p>2011, ՌԶԳ ՀԿ` հովիվների համար ապաստարանի շինարարություն` իր բոլոր հարմարություններով</p> <p>2012, ՌԶԳ ՀԿ` անասնաբուժական ծառայության կետի հիմնադրում</p> <p>2012, GIZ` համակարգչի և տպիչի տրամադրում</p>	
ԹԱՍԻԿ	<p>2015 թ. Թասիկի արոտավայրերը զբաղեցնում էին 3861 հա տարածք, բայց 2016-ին Աշոտավան որոշ արոտավայրեր հանձնվեցին Թասիկին, արդյունքում արոտավայրերի ընդհանուր մակերեսը կազմեց 4051 հա:</p> <p>2014, ՌԶԳ ՀԿ` 2 ջրի կետերի ստեղծում հեռավոր և</p>	<p>Չկան ձախողված ծրագրեր</p>

<p>ՇԱՔԻ</p>	<p>մոտակա արոտավայրերում</p> <p>2011, GIZ՝ համակարգչային տեխնոլոգիաների և տպիչի տրամադրում</p> <p>ԳԾԻԳ և ՌԶԳ ՀԿ՝ հեռավոր արոտավայրերում խմելու ջրի կետի ստեղծում</p> <p>Վորլդ Վիժն Հայաստան՝ ջերմոցային շենքի կառուցում համայնքում (որպես նորարարական նախագիծ)</p> <p>ԳԾԻԳ՝ կոոպերատիվի հիմնադրում, որին տրամադրվում է հատուկ մեքենամեխանիզմ</p> <p>Համայնքի ամենալավ հաջողությունը այն է, որ գյուղը ամբողջությամբ մատակարարվում է գազով, փողոցները ասֆալտապատ են, և կա լուսավորություն գիշերը:</p>	<p>Ջրամատակարարման կետերի քանակը բավարար չէ համայնքի համար</p> <p>Ջերմոցը չի ջեռուցվում</p>
<p>ՏՈՒՈՐՍ</p>	<p>ՌԶԳ ՀԿ՝ ջրամատակարարման կետերի հիմնում</p> <p>Վորլդ Վիժն Հայաստան՝ ջերմոցային շենքի կառուցում համայնքում (որպես նորարարական նախագիծ), որտեղ աճեցնում են վարունգ</p> <p>Վորլդ Վիժն Հայաստան, 2011՝ լուսավորության մատակարարում</p> <p>Վորլդ Վիժն Հայաստան՝ համայնքում կան երեխաների հատուկ խմբեր, ովքեր ստանում են նվերներ ամեն տարի</p>	<p>GIZ կողմից տրամադրված համակարգիչը այրվել էր (վնասվել է էլեկտրականության հետ կապված):</p>
<p>ՄԱԼՎԱՐԴ</p>	<p>2011, ՌԶԳ ՀԿ՝ արոտավայրեր տանող ճանապարհների վերակառուցում</p> <p>2015, ՌԶԳ ՀԿ՝ հեռավոր արոտավայրերում խմելու ջրի կետի ստեղծում</p> <p>2012, Վորլդ Վիժն Հայաստան՝ գյուղի միջնակարգ դպրոցի մի քանի դասասենյակների հարդարում</p> <p>2011, ՌԶԳ ՀԿ - համայնքում կաթի հավաքման կետի վերանորոգում</p> <p>2013, Վորլդ Վիժն Հայաստան - մշակույթի տան խոհանոցի հարդարման աշխատանքեր</p> <p>2014, Շվեյցարական բանկ՝ «Երիտասարդական զբաղվածության հիմնախնդիրները» ծրագիրը, որի արդյունքում համայնքապետարանում կառուցվել է երիտասարդների սենյակ, վերանորոգվել, հագեցվել և կահավորվել է, որտեղ անցկացվում են գործարար պլանավորման և հաշվապահական հաշվառման դասընթացներ</p>	

<p>ԱՇՈՏԱՎԱՆ</p>	<p>2012, Վորլդ Վիժն Հայաստան և Քաունթերփարթ Ինթերնեշնլ՝ համայնքի մանկապարտեզի հարդարման աշխատանքներ ևս արքավորումներ / կահավորում</p> <p>2012, Քաունթերփարթ Ինթերնեշնլ՝ փողոցների լուսավորություն</p> <p>2013, ՌԶԳ ՀԿ՝ արոտավայրերում խմելու ջրի կետերի ստեղծում</p> <p>2011, GIZ՝ համայնքապետարանին մեկ համակարգչով և տպիչով վերազինում</p> <p>2016, Ռազմավարական զագացման գործակալություն ՀԿ՝ Հեռավոր արոտավայրեր տանող ճանապարհների վերակառուցում և բարելավում</p> <p>2016, ՌԶԳ ՀԿ՝ Աջակցություն արոտավայրերի հետ տարվող աշխատանքներին շարունակական գործընթացներով և կայուն վերահսկմամբ</p>	<p>Ոչ մի ծրագիր չի իրականացվել մրգերի աճեցման խթանմանն ուղղված:</p>
<p>ՆՈՐԱՎԱՆ</p>	<p>2010, ՌԶԳ ՀԿ՝ արոտավայրերում 2 ջրային կետերի հիմնում</p> <p>2010, GIZ՝ համայնքապետարանին մեկ համակարգչով և տպիչով վերազինում</p>	<p>Ջրամատակարարման ընթացիկ կետերը պահանջում էին վերանորոգում:</p>
<p>ՆԺԴԵՀ</p>	<p>2011, GIZ՝ համայնքապետարանին մեկ համակարգչով և տպիչով վերազինում, որի շնորհիվ աշխատանքը համայնքապետարանում դարձել է ավելի արդյունավետ և ավելի հեշտ:</p>	<p>2015թ.-ին ենթադրվում էր ներդնել խմելու տարաներ կորպորատիվի կողմից, որը մինչ օրս դեռ կատարված չէ</p>

Քանի որ արոտավայրի օգտագործումը պիլոտային համայնքներում կենսաբազմազանության ուսումնասիրության ընթացակարգերի առավել կարևոր բաղադրիչներից մեկն է, հետաքրքրական և տեղեկատվական է վերանայել ոլորտում տեղական և միջազգային կազմակերպությունների լավագույն գործելակերպերը և ձեռք բերված արդյունքները:

24 թիրախային համայնքներում (ներառյալ բոլոր պիլոտային համայնքները) իրականացվել են հետևյալ միջամտությունները ՌԶԳ ՀԿ համագործակցության և GIZ և շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորման արդյունքում:



2015 թ. նոյեմբերին «Արտոտավայրերի կառավարման պիլոտային ծրագիրը Սիսիանի տարածաշրջանի ընտրված համայնքներում՝ հիմնված Արտոտավայրերի մոնիտորինգի ձեռնարկի վրա», ծրագրի շրջանակներում արտոտավայրերի օգտագործման ոլորտի ուսումնասիրությունն անցկացվել է Սիսիանի տարածաշրջանի համայնքներում՝ 19 ծրագրով:

Ուսումնասիրության հիմնական նպատակներն են թիրախային համայնքներում ներդնել ստորև թվարկվածները՝

1. Արտոտավայրերի օգտագործման կազմակերպում և ընթացիկ հարցեր
2. Գյուղացու իրազեկվածությունն արտոտավայրերի կայուն օգտագործման նպատակով կիրառվող օգտագործման ընթացակարգից
3. Ռոտացիոն արածեցման կարևորությունը և նշանակությունը
4. Արտոտավայրերի կառավարման ընթացակարգի օգտագործման պոտենցիալ ազդեցությունները


Ծրագրում ներգրավված 24 համայնքներից 19-ը (Բոնակոթ, Նժդեհ, Սառնակունք, Տոլորս, Հացավան, Բնունիս, Թասիկ, Ախլաթյան, Բալակ, Դարբաս / Շամբ, Շաղատ, Սավարդ, Աշոտավան, Վաղատին, Լոր, Անգեղակոթ, Նորավան, Իշխանասար, Տորունիկ) փոփոխել են իրենց համայնքների արտոտավայրերի կառավարման պլանները, ըստ «Արտոտավայրերի և բնական խոտհարքների կայուն զարգացման և իրականացման ծրագրերի ուղեցույց»-ի, որը հիմնված էր արտոտավայրերի նախնական գնահատման վրա՝ «ՀՀ արտոտավայրերի մոնիտորինգի ձեռնարկի» մեթոդաբանության օգտագործմամբ: Համայնքների փոփոխված արտոտավայրերի կառավարման պլանները ներկայացվել են 2015 թ. մայիսից: Արտոտավայրերի կայուն կառավարման ընթացակարգի ներդրումը

հանգեցրել է շուրջ 42.135 հա պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի ներգրավմանը արոտավայրերի օգտագործման օրացուցային ժամանակացույցներում: Ներկայումս, կառավարման պլաններում գրանցված՝ ընդհանուր արոտավայրերի տարածքներից դուրս, և 19 համայնքների վարչական տարածքներում, կիրառվում է կայուն արոտավայրերի կառավարման ծրագիրը՝ շուրջ 20.980 հա տարածքով մոտակա և հեռավոր արոտներում, որոնցից 5-ն ամբողջությամբ համապատասխանում են անասնագլխի/անասունների գլխաքանակի համար անհրաժեշտ արոտավայրերի տարածքային պահանջին, ինչպես նաև՝ արոտավայրի վիճակին ինդեքս (ԱՎԻ) թույլատրելի արածեցման սահման (ԹԱՍ):

Նորացված կառավարման ծրագրով արոտավայրերի օգտագործման առաջին տարվա ընթացքում թիրախային համայնքային արոտավայրերում արածեցվող անասունների գլխաքանակը կազմել է 13,203: Անասնապահական տնտեսություններում իրականացված հարցման արդյունքներով հաշվետու ժամանակաշրջանի համար խոշոր եղջերավոր անասունների թվաքանակը 19 համայնքների արոտավայրերում արածեցման սեզոնի ընթացքում կազմում էր առկա կենդանիների ավելի քան 70% -ը, այդ թվում՝ 80% -ը կաթնատու կովեր և 72% մսատու կենդանիներ: Ընդհանուր առմամբ, 2015 թ. արոտավայրերն օգտագործվում էին 9400 խոշոր կենդանիների համար, որոնցից 4500-ը՝ կովեր և 2600 կաթնատու խոշոր եղջերավոր անասուն:

Այստեղ ներկայացված են արոտավայրերի կառավարմանը ցուցաբերած միջամտության ուսումնասիրության շոշափելի արդյունքները՝ տեղական անասնապահական տնտեսությունների շրջանում իրականացված լայնածավալ հարցման միջոցով՝

Գծապատկեր 17. Արոտավայրերի կառավարման բարելավումներից հետո ֆերմերային տնտեսության կողմից կիրառված մեթոդները, %, 2015թ.-ի վերջ



7. Եզրակացություններ

Ամփոփելով սույն հաշվետվությունում հավաքագրված, վերլուծված և ներկայացված տվյալները՝ կարող ենք փաստել, որ Սյունիքի մարզն ունի բազմաթիվ սահմանափակումներ սոցիալ-տնտեսական կյանքի բնականոն ու կայուն զարգացման համար: Հիմնական սահմանափակումները կապված են բնապահպանական անհարմարությունների հետ՝ հեռավորությունը մայրաքաղաքից, լեռնային լանդշաֆտները և ենթակառուցվածքների բացակայությունը:

Չնայած այն հանգամանքին, որ Սյունիքի մարզը միջազգային և ազգային կազմակերպությունների մի շարք զարգացման ծրագրերի շրջանակներում հանդիսանում է հիմնական թիրախային տարածաշրջաններից մեկը՝ այն շարունակում է մնալ առավել խոցելի տարածքներից՝ իր գյուղատնտեսական մթերքների իրացման խոշոր շուկաներ մուտքով և կապված իր իրական լիարժեք ներուժի, որն, ըստ էության, նա ունի, ուժերի ու հնարավորությունների ներկայացմամբ:

Այստեղ գնահատելի է այն փաստը, որ տարածաշրջանում շատ պիլոտային ծրագրեր են իրականացվել, և հաջողություն չգրանցելուց հետո, այն, միննույն է, նպաստել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ֆերմերների կողմից ավանդական մոտեցումների փոփոխությանը:

Եզրակացությունները մասնակիորեն հիմնված են տնային տնտեսությունների հետազոտությունների վրա, որն իրականացվել է ՌԶԳ ՀԿ կողմից 19 համայնքներում արոտավայրերի կառավարման պիլոտային մոդելի ներդրումից հետո, ընդ որում՝ պիլոտային համայնքներից 7-ը (Բոնակոթ, Նժդեհ, Տոլորս, Թասիկ, Սալվարդ, Աշոտավան, Նորավան) և Սառնակունք բնակավայրն ընթացիկ Ծրագրի շրջանակներում հաջողությամբ կիրառել են բարելավված գործիքներն ու մեթոդները մոտ և հեռավոր արոտավայրերի օգտագործման ժամանակ:

Դա խրախուսում է նաև այլ մարզերին և տարածաշրջաններին օրինակ վերցնել և ներդրումներ ներգրավել արոտավայրերի կառավարման համար՝ ներդնելով Սյունիքի մարզի լավագույն պրակտիկան իրենց տնտեսակարգում՝ նպատակով ընդհանուր գյուղատնտեսության, բնապահպանության և, հետևաբար, ընդհանուր տնտեսության զարգացման նպատակով:

Սակայն, Սյունիքի մարզում դեռևս կան համայնքներ, որոնք մանրակրկիտ վերահսկողության կարիք ունեն՝ արոտավայրերի կառավարման գործիքների կայուն օգտագործման համար: Այսպիսով, ՌԶԳ ՀԿ-ի և GIZ-ի միջև հետագա համագործակցության ընդլայնումն այս առումով խիստ ցանկալի է:

Անտառային ռեսուրսների պահպանումը նույնպես պետք է մեծ նշանակություն ունենա տարածաշրջանի համար: Հաշվի առնելով այն փաստը, որ Սիսիանի Անտառատնտեսության վերջին թարմացումներն իրականացվել են 1980-ականների վերջին, ազգային և միջազգային կազմակերպությունների կողմից որոշակի միջոցներ պետք է ձեռնարկվեն իրավիճակի ավելի իրատեսական նորացված պատկեր ստանալու ուղղությամբ, ինչպես նաև՝ պետք է համապատասխան քայլեր ձեռնարկվեն ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից:

8. Օգտագործված գրականության ցանկ

1. Ազգային վիճակագրական ծառայություն, մարզային վիճակագրություն՝ <http://armstat.am/am/?nid=50>
2. Սյունիքի քաղաքապետարան, պաշտոնական կայք-էջ՝ <http://syunik.mtad.am/>
3. ՀՀ Սյունիքի մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն, Զեկույց, Սյունիքի քաղաքապետարան, պաշտոնական կայք-էջ՝ <http://syunik.mtad.am/socio-economic-situation/>
4. Քաղաք Սիսիան, պաշտոնական կայք-էջ՝ <http://sisian.am/Pages/Home/Default.aspx>
5. Հայկական իրավական տեղեկատվական կենտրոն, <http://www.arlis.am/>
6. [ՀՀ գյուղատնտեսության նախարարության](#) «Գյուղատնտեսության Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական գործակալություն՝ <http://www.arspiu.com/home.0.html?&L=0>
7. Սիսիանի անտառաբուծության կառավարման պլան, Հայաստան ՊՈԱԿ, պաշտոնական կայքէջ՝ <http://hayantar.am/%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B4/>
8. Սիսիան քաղաքի կայքէջի խթանում՝ ստեղծված Վորլդ Վիժն Հայաստանի աջակցությամբ <http://flysisian.am/index.php?lang=hy>
9. <http://www.armgeo.am/armenian-reservoirs/>
10. <http://syunikonline.am/4569.html>
11. <http://www.armecofront.net/lrahos/vtangavor-pochambarner/>
12. http://am.geoview.info/reservoir_geghi,25116363p
13. Գյուղատնտեսական կենդանաբուծության ոլորտում արոտավայրերի կառավարման ընթացակարգի հնարավոր ազդեցության նախնական գնահատումը, Հաշվետվություն, 2015, ՌԶԳ ՀԿ
14. Սիսիանի տարածաշրջանի ընտրված համայնքներում արոտավայրերի կառավարման պիլոտային պլանը՝ հիմնված ՀՀ արոտավայրերի մոնիտորինգի ձեռնարկի վրա, Հաշվետվություն, 2015, ՌԶԳ ՀԿ
15. Արոտավայրերի մոնիտորինգի փորձնական մոդել, Հաշվետվություն, 2013, ՌԶԳ ՀԿ
16. Ոլորտում իրականացվող աշխատանքների վերլուծություն համայնքապետերի և համայնքապետարանների ներկայացուցիչների հետ անցկացվող հարցազրույցների միջոցով
17. Բնակչության տվյալների համայնքային ռեգիստրներ
18. Կենդանիների համայնքային ռեգիստրներ
19. Լուսանկարների ռեսուրսներ՝ Google-ում որոնման արդյունքում ստացված նկարներ, «Հայաստան» ՊՈԱԿ-ի պաշտոնական համացանցային կայք, համայնքապետարաններ:

9. Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ոլորտում իրականացվող աշխատանքներ՝ Ուղեցույցներ – Մյունիքի մարզ

	Հարցազրույցի մասնակից (անուն, ազգանուն, պաշտոն)			Տեղեկատվություն / Թեմա	Տեղեկատվության աղբյուր / Տեղեկատվության աղբյուր	Համայնքների վերաբերյալ տվյալներ										Մարզի վերաբերյալ տվյալներ
	Տեղեկատվության աղբյուր	Ժամանակահատվածը, որին վերաբերում են	Տեղեկատվության աղբյուր			1. Գոյացիքի քանակություն ¹⁰	2. Լոռական	3. Շաքի	4. Թուրս	5. Աշտարակ	6. Թափի	7. Նոյեմ	8. Բնակիք	9. Սյունիք		
1. Գործող և գրանցված տնային տնտեսությունների թիվը յուրաքանչյուր համայնքի (առանձին) և մարզի համար (ընդհանուր)	Տնային տնտեսությունների թիվը յուրաքանչյուր համայնքի (առանձին) և մարզի համար (ընդհանուր)	2011–2016 թվականներ (ներառյալ մինչև 2016 թվականը նույնիսկ ամիսը կատարված թարմացումները)	Տնային տնտեսությունների թիվը յուրաքանչյուր համայնքի (առանձին) և մարզի համար (ընդհանուր)	Տեղեկատվության աղբյուր / Տեղեկատվության աղբյուր	Համայնքի վարչական մարմին	1. Գոյացիքի քանակություն ¹⁰	2. Լոռական	3. Շաքի	4. Թուրս	5. Աշտարակ	6. Թափի	7. Նոյեմ	8. Բնակիք	9. Սյունիք	Մյունիք (Սիսիան) մարզի ամբողջական:	

¹⁰ Gorayk, Sarnakung, Tsghuk and Spandaryan settlements included

2.	<p>Հողերի, արտոտվայրերի, բնական պաշարների քարտեզներ, ինչպես նաև ցանկացած տեսակի քարտեզներ, որոնք վերաբերում են շրջակա միջավայրին, հողային և բնական պաշարներին՝ առկայության դեպքում (համայնքապետարան ներք սովորաբար դրանք կախում են իրենց սենյակներում)</p>	<p>Մկանավոր վաճ տարբերակ ներ/ լուսանկար ներ և քարտեզ ների համար ուղեցույց ների թղթային օրինակներ (եթե հասանելի են)</p>	<p>2015–2016 թվականներ (վերջին թարմացված տարբերակները)</p>	<p>Համայն քի դեկա վարներ և մունիցի պալ մարմին</p>						
3.	<p>Հողերի, արտոտվայրերի, բնական պաշարների քարտեզներ, ինչպես նաև ցանկացած տեսակի քարտեզներ, որոնք վերաբերում են շրջակա միջավայրին, հողային և</p>	<p>Մանրակր կիտ հարցա զրույց և սքան տարբերակ ներ/</p>	<p>2011–2016 թվականներ, կարևոր փոփոխություններ և փաստեր</p>	<p>Համայն քի դեկա վարներ և նրանց աշխա</p>						

	բնական պաշարներին	լուսանկարներ, պատկերներ վերբալ նկարագրություններ կամ աղյուսակներ (եթե հասանելի են)	տակագներ Մարզի դեպքում՝ մարզ պետարան																	
4.	Միգրացիայի վերաբերյալ ընթացիկ տվյալներ. յուրաքանչյուր համայնքի կարգավիճակն ու ուղղությունն առանձին, իսկ մարզինը՝ ընդհանուր	Հարցազրույցներ և թղթային օրինակներ	2011–2016 թվականներ, վերջին թարմացումներ	Համայնքի դեկավարներ																
5.	Ընտանի անատուների քանակությունը յուրաքանչյուր համայնքում/մարզում՝ ներառյալ յուրաքանչյուր	Օրագրերի թղթային օրինակներ. Հարցազրույցներ	վերջին թարմացումները մինչև 2016 թվականի նոյեմբեր	Համայնքի դեկավար																


	<p>տնային տնտեսությունում գրանցված սիջին ցուցանիշը:</p>		<p>Փոփոխությունները 2011–2016 թվականների ընթացքում</p>	<p>ների աշխատասենյակ և պատասխանատու անձնակազմը</p>				
<p>6.</p>	<p>Մանր եղջերավոր անասունների (ոչխարներ և այծեր) քանակությունը յուրաքանչյուր համայնքում/մարզում:</p>	<p>Օրագրերի թղթային օրինակներ. Հարցազրույցներ</p>	<p>Վերջին թարմացումները մինչև 2016 թվականի նոյեմբեր</p>	<p>Համայնքի ղեկավարի</p>				
<p>7.</p>	<p>Հիմնական բարելավումները և գործողությունները, որոնք աջակցում են հողօգտագործման և արտավայրերի կառավարման ծրագրերի իրականացման</p>	<p>Հարցազրույցներ, ցուցակներ և նկարագրեր, քանակական ցուցանիշ</p>	<p>2011 – 2016 թթ. վերջին թարմացումները, ընթացիկ և պլանավորված</p>	<p>Համայնքի ղեկավարներ և պատասխանատու անձնակազմը</p>				

10.	Ջրի շահագործման նախագծեր (ոչ խորության մեջ)	Հարցազրույցներ, ցուցակներ և նկարագրեր, քանակական կանցումային ցուցանիշներ, եթե առկա են	2011 – 2016թթ. վերջին թարմացումները, ընթացիկ և պլանավորվող	Համայնքի ղեկավարները և պատասխանատու անձնակազմը						
11.	Նորարար ծառայություններ/ապրանքներ համայնքում/մարզում, որոնք սշակվել և ներդրվել են ծրագրերի միջոցով (անհրաժեշտության դեպքում վերստուգում)	Հարցազրույցներ նշումներով/դիտորություններով ¹¹	2011–2016 թվականներ	Համայնքի ղեկավարներ և պատասխանատու անձնակազմը						
12.	Տարածաշրջանում	Հարցազրույց	2011–2016	Տարած						

¹¹ Հավաստող փաստաթղթերը/թղթային օրինակները ցանկայի են, եթե հասանելի են:

	<p>Իրականացված ծրագրերի հատուկ դեպքեր, հաջողության ն/կամ ձախողման պատմություններ, նյութական հետևանքներ</p>	<p>ցներ նշումներով/ դիտորու թյուններով</p>	<p>Թվականներ կամ սույն ժամանակահատված հետո, եթե կան անհրաժեշտություն/ կարևոր է ազդեցության սեռանկյունից</p>	<p>աշրջանում իրականացված ծրագրերի հատուկ դեպքեր հաջողությամբ յան/կամ ձախողման պատմություններ, նյութական հետևանքներ</p>											<p>Համայնքի</p>	<p>2011 – 2016թթ. կամ ավելի ուշ,</p>	<p>Հարցազրույցներ</p>	<p>Նշանակալից փաստեր / բարելավումներ</p>	<p>13.</p>
--	--	--	---	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	-----------------	--------------------------------------	-----------------------	--	------------

	<p>գյուղատնտեսական արտադրանքի և ծառայությունների շուկաներում, հիմնական գործընկերներ և արժեզրեզաններ (օր.՝ կաթ, միս, (գյուղատնտեսական) գրասաշրջություն)</p>	<p>նշումներով / դիտողություններով համապատասխան խանաբար արտադրության / ծառայության յան որևէ ոլորտում</p>	<p>Եթե անհրաժեշտ է/ կարևոր է ազդեցության առումներով</p>	<p>դեկավարներ և պատասխանատու անձնակազմը</p>						
<p>14</p>	<p>Համայնքային/տարածաշրջանային գրքույկի հայեցակարգի նախնական քննարկում</p>	<p>Հարցազրույցներ նշումներով / դիտողություններով</p>		<p>Համայնքի դեկավարներ և պատասխանատու անձնակազմը</p>						



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

WITH FUNDING FROM
 AUSTRIAN
DEVELOPMENT
COOPERATION

Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում Հարավային Կովկասում, ԿԻԿ

GIZ Հայաստանյան գրասենյակ

Բաղրամյան 4/1, 0019 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0)10 581877

www.giz.de

www.biodivers-southcaucasus.org

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH